Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր` հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին` աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՄՈՒՇԵՂ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

## ԼՂՀ-ում ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-1998)



*Տպագրվում է ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստի որոշմամբ*

Օհանջանյան Մ. Գ.

Անկախության քայլերը: Մուշեղ Օհանջանյան: «Սոնա» գրահրատարակչություն, 1998 թ.: 64 էջ:

© «ՍՈՆԱ» ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 1998

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս հրատարակումը նպատակ ունի ամփոփ կերպով ներկայացնել 1991 թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների 1991 թվականի, Ազգային ժողովի պատգամավորների 1995 թվականի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահի 1996 թվականի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի 1997 թվականի արտահերթ, տեղական ինքնակառավարման մարմինների 1998 թվականի ընտրությունների արդյունքները:

Գրքույկը վիճակագրական տվյալների սոսկ ամփոփումը չէ, այլ նաեւ հետապնդում է քաղաքական այն նպատակը, որ նորանկախ ԼՂՀ-ում տեղի ունեցող ընտրությունները արցախյան հինավուրց հողում նոր պետականության կայացման, ժողովրդավարության գործընթացի խորացման եւ, ի վերջո, մեր ազգային նպատակների իրականացման վկայություն են: Նաեւ նշումն է այն աշխատանքների, որ իրականացրել է ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Հանձնաժողովը ամեն ինչ արել է, որպեսզի մեր նոր պետականության պայմաններում ընտրություններն անցնեն ժողովրդավարության բարձր պահանջներին, միջազգային չափանիշներին համաձայն:

Բոլոր մակարդակների ընտրությունների ամբողջ ընթացքում մանրակրկիտ ու քրտնաջան, եթե կուզեք՝ նվիրված աշխատանք է կատարել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ: Անհրաժեշտ եմ համարում ներկայացնել ԼՂՀ Ազգային Ժողովի (Գերագույն խորհրդի) կողմից հաստատված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը. ԿԸՀ նախագահ՝ Մուշեղ Գրիգորի Օհանջանյան, ԿԸՀ նախագահի տեղակալ՝ Էդուարդ Դավթի Պետրոսյան, քարտուղար՝ Ռայա Թարխանի Նազարյան, ԿԸՀ անդամներ՝ Սերգեյ Մուշեղի Նասիրյան, Լեւոն Միքայելի Ոսկանյան, Կամո Գուրգենի Աղասյան, Սլավիկ Լազարի Պետրոսյան, Սուսիան Արծվիկի Հակոբյան, Կարինե Ալեքի Ջհանգիրյան, Ապրես Մեսրոպի Թովմասյան, Մհեր Մերուժանի Նիկողոսյան:

1991-1993 թվականներին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահներ են եղել Էդուարդ Պետրոսյանը եւ Սերգեյ Նասիրյանը:

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ

Հանրաքվեն անցկացվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհրդի 1991 թվականի նոյեմբերի 27-ի որոշման եւ «Հանրաքվեի անցկացման մասին» ժամանակավոր կանոնակարգի:

Քվեարկությունը սկսվել է տեղական ժամանակով ժամը 8-ին եւ ավարտվել ժամը 20-ին:

Հանրաքվեին մասնակցել են Ստեփանակերտ քաղաքի, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Շահումյանի շրջանների բնակիչները: Շուշիի շրջանում մասնակցել են միայն հայաբնակ Քարին տակի, Կիրովի, Մեծ շենի, Եղծահողի, Ծաղկաձորի բնակիչները:

Հանրաքվեին մասնակցել են նաեւ Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակիչները, ուսանողները, գործուղման մեջ գտնվողները, որտեղ, համաձայն ԼՂՀ ժողովրդական պատգամավորների գործադիր կոմիտեի 1991 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման, կազմավորվել են ընտրական տեղամասեր:

ԼՂՀ ժողովրդական պատգամավորների գործադիր կոմիտեի 1991 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ կազմավորվել են հանրաքվեի 81 ընտրատարածքային հանձնաժողովներ, քվեարկությունը տեղի է ունեցել 70 ընտրատարածքներում: Ադրբեջանաբնակ 10 ընտրատարածքներում եւ մեկ ռազմական (փակ) ընտրատարածքում քվեարկություն տեղի չի ունեցել:

Հանրաքվեի անցկացման օրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքը, հատկապես նրա մայրաքաղաք Ստեփանակերտը ադրբեջանական հրոսակների կողմից ենթարկվել է հրթիռահրետակոծության: Դա հուսահատական փորձ էր պաշտոնական Բաքվի կողմից՝ արցախցիներին զրկել կամքի ազատ արտահայտման միջոցով որոշելու պատմական իր ճակատագիրը: Մայրաքաղաքում եւ շրջաններում եղել են բազմաթիվ ավերածություններ: Հանրաքվեի օրը հանրապետության տարածքում սպանվածների թիվը կազմել է 10 մարդ: Չնայած այդ



ամենին ԼՂՀ բնակչությունը, հաղթահարելով բազում դժվարություններ, միահամուռ կերպով, բարձր կազմակերպվածությամբ մասնակցել է հանրաքվեին:

Ամփոփելով հանրաքվեի քվեարկությունների արդյունքները 70 ընտրատարածքներում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզել է.

1. ընտրողների ընդհանուր քանակը, որոնք մտցվել են հանրաքվեի անցկացման ցուցակներում, կազմել է 132.328 մարդ.

2. քվեարկություններին մասնակցած ընտրողների քանակը կազմել է 108.736 մարդ կամ ընտրողների ընդհանուր քանակի 82,2 տոկոսը.

*3. Հանրաքվեի մասնակիցներից «Համաձա՞յն եք դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձեւը ուրիշ պետությունների եւ ընկերակցությունների հետ» հարցին պատասխանել են՝*

*«Այո» - 108.615 հոգի կամ քվեարկությանը մասնակցածների 99,9 տոկոսը,*

*«Ոչ» - 24 հոգի կամ 0,002 տոկոսը.*

4. անվավեր քվեաթերթիկների քանակը կազմել է 95 հատ:

*Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության բացարձակ մեծամասնությունը արտահայտվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության օգտին:*

Հանրաքվեի արդյունքները

| Շրջաններ | Ընտրողների ընդհանուր քանակը ըստ ցուցակների | Քվեարկությանը մասնակցած ընտրողների քանակը | | Քվեարկության արդյունքները | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Տոկոս | «Այո» Ընդ. | «Այո» տոկոս | «Ոչ» Ընդ. | «Ոչ» տոկոս | Ճանաչ. է անվ. Ընդ. | Ճանաչ. է անվ. տոկոս |
| Ստեփանակերտ | 36022 | 33063 | 91,8 | 33003 | 99,8 | 11 | 0,03 | 49 | 0,14 |
| Ասկերանի | 13295 | 10708 | 80,5 | 10703 | 99,9 | - | - | 5 | 0,4 |
| Հադրութի | 7960 | 7802 | 98,0 | 7782 | 99,7 | 5 | 0,06 | 15 | 0,19 |
| Մարտակերտի | 30127 | 27096 | 89,9 | 27082 | 99,9 | 2 | 0,07 | 11 | 0,04 |
| Մարտունու | 17478 | 16020 | 97,6 | 16000 | 99,9 | 6 | 0,06 | 14 | 0,02 |
| Շուշիի | 13728 | 545 | 3,96 | 545 | 100,0 | - | - | - | - |
| Շահումյանի | 9339 | 9122 | 97,6 | 9121 | 99,9 | - | - | 1 | 0,01 |
| Հանրաքվեի օրը ՀՀ-ում ժամանակավոր գտնվող ԼՂՀ քաղաքացիներ | 4379 | 4379 | 100,0 | 4379 | 100,0 | - | - | - | - |
| *Ընդամենը ԼՂՀ* | 132328 | 108736 | 82,2 | 108615 | 99,9 | 24 | 0,02 | 95 | 0,09 |

Հանրաքվեի անցկացմանը մասնակցել եւ հետեւել են բազմաթիվ անկախ դիտորդներ նախկին ԽՍՀՄ, ՌԽՍՖՀ, Մոսխորհրդի պատգամավորներ, միութենական եւ հանրապետական տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մարդու իրավունքների պաշտպանության, իրավագիտական մասնագետներ, զանգվածային լրատվության միջոցների, արտասահմանյան տարբեր գործակալությունների թվով ավելի քան 40 ներկայացուցիչներ: Նրանք հետեւել են հանրաքվեի անցկացման օրինականությանը ավելի քան 30 ընտրական տեղամասերում՝ Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու եւ Շահումյանի շրջաններում: Այդ մասին նրանք կազմել են հատուկ ակտ:

## ԱԿՏ
## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1991 թ. դեկտեմբերի 10-ից ԼՂՀ-ում էին գտնվում մի խումբ անկախ դիտորդներ՝ ԼՂՀ կարգավիճակի հարցով հանրաքվեի ընթացքին հետեւելու նպատակով:

Դիտորդական խմբերը աշխատել են Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու եւ Շահումյանի շրջաններում: Դիտորդները այցելել են ավելի քան 30 ընտրական տեղամասեր, ներկա գտնվել ձայների հաշվմանը:

Անկախ դիտորդները հավաստագրում են.

Հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը եւ արդյունքների ամփոփումը իրականացվել են «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգ»-ին համապատասխան: ԼՂՀ տարածքում կազմվել է 81 ընտրատարածք: Ընտրատարածքների ցուցակը եւ տարածքային ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Ընտրողների ցուցակներում ընդգրկված են եղել ձայնի իրավունք ունեցող 132.328 մարդ:

Հանրաքվեի հարցը ձեւակերպվել է այսպես.

*«Համաձա՞յն եք դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձեւը ուրիշ պետությունների եւ ընկերակցությունների հետ»:*





1992 թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման նստաշրջանում փակ գաղտնի քվեարկությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ է ընտրվել Արթուր Ալլանի ՄԿՐՏՉՅԱՆԸ:

Երեք՝ հայերեն, ադրբեջաներեն եւ ռուսերեն լեզուներով քվեաթերթիկները պարունակում են նշված հարցը եւ «Այո», «Ոչ» բառերը (անցանկալին ջնջել): Նշված լեզուներից մեկով գրված քվեաթերթիկը (ըստ ընտրողի ցանկության) տրվել է անձնագրի ներկայացմամբ եւ ստորագրությամբ:

Դիտորդների կողմից չեն հայտնաբերվել քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրման, դրանց ձեւակերպման, ձայների հաշվման խախտումներ:

Դիտորդները անհրաժեշտ են համարում նշել, որ հանրաքվեն անցկացվել է ԼՂՀ-ի դեմ զինված ագրեսիայի պայմաններում, ինչն արտահայտվում է Ստեփանակերտ քաղաքի եւ մյուս բնակավայրերի անդադար հրետակոծությունների մեջ տարբեր զինատեսակների կիրառմամբ, ներառյալ հրթիռներն ու հրետանին: Քվեարկության օրը հրետակոծումներից զոհվել են 10, վիրավորվել՝ 11 հայեր: Ստեփանակերտ քաղաքի կանանց եւ երեխաների մեծամասնությունը գիշերում են նկուղներում, փակ են մսուր-մանկապարտեզները, դպրոցները: Դեկտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը հրետանային արկ է ընկել Ստեփանակերտի դպրոցներից մեկը: Պայթեցված է քաղաքային ջրատարը, չկա հաց, դեղորայք:

Հանրաքվեին մասնակցել են 108.736 մարդ, ինչը կազմում է գրանցված ընտրողների թվի 82,2 տոկոսը: Քվեարկությանը չմասնակցածների գերակշիռ մեծամասնությունը ադրբեջանական բնակավայրերի բնակիչներն են:

Քվետուփերը բացելով՝ դրանցում հայտնաբերվել են 108.736 քվաթերթիկներ, 95 քվեաթերթիկներ ճանաչվել են անվավեր:

Քվեարկության արդյունքները.

«Այո» - 108.615 (քվեարկության մասնակիցների թվի 99,89 տոկոսը)

«Ոչ» - 24 (քվեարկության մասնակիցների թվի 0,02 տոկոսը):

Վերոհիշյալ «ժամանակավոր կանոնակարգի» համաձայն, հանրաքվեի առաջադրած որոշումը համարվում է ընդունված, եթե քվեարկությանը մասնակցել է քվեացուցակներում նշված անձանց կեսից ավելին, հանրաքվեի արդյունքներով որոշմանը հավանություն են տվել քվեարկության մասնակիցների առնվազն 2/3-ը:

Ելնելով քվեարկության արդյունքներից եւ նկատի առնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի եւ միջազգային ակտերի դրույթները, անկախ դիտորդները հայտարարում են.



*ԼՂՀ բնակչությունը ձայների ճնշող մեծամասնությամբ արտահայտվել է ԼՂՀ անկախության օգտին:*

| | | |
|---|---|---|
| Աֆանասեւ Յուրի Նիկոլաեւիչ | - | ԽՍՀՄ եւ ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր |
| Սմիռնով Վլադիմիր Սերգեեւիչ | - | ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր |
| Նազարով Բորիս Լազարովիչ | - | մարդու իրավունքների տեղեկատվական կենտրոնի նախագահ |
| Պրոշեչկին Եվգենի Վիկտորովիչ | - | «Ժողովրդավարական Ռուսաստան» |
| Պրիբիլովսկի Վլադիմիր Վմերյանովիչ | - | «Անի», «Պանորամա» |
| Վսեվոլոդսկի Կոնստանտին Էմմանուիլովիչ | - | ԵԱԽՀ մարդու իրավունքների միջազգային կոնգրես. Սանկտ-Պետերբուրգի իրավապաշտպան կենտրոն |
| Պոլյակովա Էլլա Միխայլովնա | - | «Մեմորիալ», «Զինվորի մայրերի շարժում», Սանկտ-Պետերբուրգ |
| Բուրկովա Ինեսա Եմելյանովնա | - | ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտե /ԿՌԻԿ/, Մոսկվա |
| Սինյանսկայա Գալինա Պետրովնա | - | «Ընդդեմ բռնության շարժում», Մոսկվա |
| Լունինա Ելենա Վլադիմիրովնա | - | զինծառայողների ծնողների մոսկովյան կոմիտե |
| Ալեքսեեւսկի Կիրիլ Միխայլովիչ | - | ԽՍՀՄ ԳԱ ընտրողների ակումբ, Մոսկվա |
| Կուլիկովա Գալինա Պավլովնա | - | ռուս մշակույթի ընկերություն. Երեւան |

| | |
|---|---|
| Դյոմին Իգոր Յուրևիչ | - ռադիո «Ռուսիա» |
| Պանկալևա Ցվետանա | - Բուլղարիայի հեռուստատեսություն |
| Մինկին Ալեքսանդր Վիկտորովիչ | - «Ստոլիցա» հանդես |
| Սուպրունենկո Օլգա Իգորևնա | - Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր |
| Մելարյե Պիեր | - «Կուրիշիեն դե Պարի», Ֆրանսիա |
| Բեատուրա Ստեֆան | - Ֆրանս-պրես, Ֆրանսիա |
| Լինթոն Մալքոլմ | - ֆոտոգործակալություն, Անգլիա |
| Սամոդուրով Յուրի Վլադիմիրովիչ | - միջազգային սախարովյան կոնգրես |
| Օլեյնիկ Լեւ Արկադևիչ | - «Իզվեստիա» |
| Ճալիգին Գենադի Ֆյոդորովիչ | - Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր |
| Տիտով Վյաչեսլավ Կոնստանտինովիչ | - Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր |
| Միկայե Ակակի Տարիելովիչ | - «Մոսկովսկիե նովոստի» |
| Պրալնիկով Անդրեյ Եվգենևիչ | - «Մեգապոլիս-էքսպրես» |
| Տավրիլով Ալեքսեյ Գրիգորևիչ | - «Մեմորիալ» |
| Ֆյոդորով Վլադիմիր Վլադիմիրովիչ | - հակաֆաշիստական կենտրոն, Մոսկվա |
| Կալինկին Նիկոլայ Իվանովիչ | - «Մեմորիալ» |
| Ֆոնտոն Սերգեյ Սերգեևիչ | - ռադիո «Էխո Մոսկվը» |
| Կրդալաշվիլի Զուրաբ Ալեքսանդրովիչ | - ԱՄՆ հեռուստատեսություն |



| | |
|---|---|
| Դալիևիչ Վլադիմիր Սերգեևիչ | - ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտե /ԿՐԻԿ/ |
| Ֆյոդորով Ալեքսեյ Ալեքսեևիչ | - «Մեգապոլիս-էքսպրես» |
| Աֆրիկյան Գայանե Թելմանի | - «Ազգ» իսպանական տեղեկատվական գործակալություն |
| Բարուշկին Անդրեյ Վլադիմիրովիչ | - Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր |
| Գորբան Վիկտոր Վասիլևիչ | - Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր |
| Դանիլով Վիտալի Ալեքսեևիչ | - ԵԱՀԽ մարդու իրավունքների միջազգային կոնգրես |
| Սախինով Էդուարդ | - Ռուսաստանի հեռուստատեսություն |
| Կիչմար Նիկոլայ Իվանովիչ | - ուկրաիներեն լեզվի ընկերություն, Ուկրաինայի ժողովրդական ՌՈՒԽ, Սեւաստոպոլ |
| Գորեւ Բորիս Իվանովիչ | - «Լիտերատուրնայա գազետա» թերթի ֆոտոթղթակից |

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմը, համաձայն ԼՂՀ ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ժամանակավոր կանոնակարգի, ընտրությունների օրը նշանակել է 1991 թվականի դեկտեմբերի 28-ը: Հանրապետության տարածքում կազմավորվել են 81 ընտրատարածքներ: Իշխանության շրջանային (քաղաքային) խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից, համաձայն նախօրոք կազմված օրացուցային պլանի, կազմավորվել են ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Ընտրությունները, ինչպես եւ անկախության հանրաքվեն անցկացվել են ռազմաքաղաքական բարդ իրավիճակում: Հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերը, հատկապես Ստեփանակերտ քաղաքը գիշեր ու ցերեկ ռմբակոծվում էին հակառակորդի կողմից: Արցախցիները, անտեսելով մահն ու սարսափը, ակտիվ մասնակցել են ընտրություններին:

Հիմնական ընտրությունները անցկացվել են 1991 թվականի դեկտեմբերի 28-ին, կրկնակի քվեարկությունը 1992 թվականի հունվարի 11-ին:

Ինչպես հանրաքվեին, այնպես էլ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների ընտրություններին չեն մասնակցել ադրբեջանաբնակ բնակավայրերի ընտրողները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրությունների հիմնական եւ կրկնակի քվեարկությունների արդյունքներով լրիվությամբ ոչ բոլոր ընտրատարածքներում են ընտրվել պատգամավորներ, որոշ ընտրատարածքներում անհրաժեշտություն է առաջացել կազմակերպել լրացուցիչ ընտրություններ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարբեր ժամկետներում անցկացրել է նոր ընտրություններ, որ շարունակվել է ընդհուպ մինչեւ 1994 թվականի հուլիսի 3-ը:

Հիմնական եւ լրացուցիչ ընտրությունների արդյունքներով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին գումարման ժողովրդական պատգամավորներ են ընտրվել.

| | | |
|---|---|---|
| Պետրոսյան Մուրադ Ազատի | Ստեփանակերտի | №1 ընտրատարածք |
| Ղուկասյան Արկադի Արշավիրի | Ստեփանակերտի | №2 ընտրատարածք |
| Հայրիյան Ռադիկ Թավադի | Ստեփանակերտի | №3 ընտրատարածք |
| Գաբրիելյան Ֆելիքս Սերգեյի | Ստեփանակերտի | №4 ընտրատարածք |
| Պետրոսյան Գարիկ Բախատուրի | Ստեփանակերտի | №5 ընտրատարածք |
| Աղաջանյան Ռոլես Գեորգիի | Ստեփանակերտի | №6 ընտրատարածք |
| Հակոբյան Վլադիկ Աշոտի | Ստեփանակերտի | №7 ընտրատարածք |
| Առուշանյան Բորիս Սերգեյի | Ստեփանակերտի | №8 ընտրատարածք |
| Խաչատրյան Հրանտ Խորենի | Ստեփանակերտի | №9 ընտրատարածք |
| Աղաջանյան Սլավա Ռուբենի | Ստեփանակերտի | №10 ընտրատարածք |
| Քոչարյան Ռոբերտ Սեդրակի | Ստեփանակերտի | №11 ընտրատարածք |
| Բալայան Վալերի Լեւոնի | Ստեփանակերտի | №12 ընտրատարածք |
| Բաբայան Բորիս Գուրգենի | Ստեփանակերտի | №13 ընտրատարածք |
| (Հյուսնունց Ռուդիկ Լեւոնի) | | |
| Ավետիսյան Իշխան Գաբրիելի | Ստեփանակերտի | №14 ընտրատարածք |
| Ղազարյան Վալերի Սերգեյի | Ստեփանակերտի | №15 ընտրատարածք |
| Մելիք-Շահնազարյան Լեւոն Հրանտի | Ստեփանակերտի | №16 ընտրատարածք |
| Բաբուրյան Կարեն Զարմայրի | Ստեփանակերտի | №17 ընտրատարածք |
| Մանուչարով Արկադի Սամվելի | Ստեփանակերտի | №18 ընտրատարածք |
| Պետրոսյան Գեորգի Միքայելի | Ստեփանակերտի | №19 ընտրատարածք |
| Սարգսյան Սերժ Ազատի | Ստեփանակերտի | №20 ընտրատարածք |
| Պողոսյան Ժիրայր Թեւանի | Ստեփանակերտի | №21 ընտրատարածք |
| Առուշանյան Սերժ Զավենի | Ստեփանակերտի | №22 ընտրատարածք |
| Աղաբալյան Վյաչեսլավ Ռուբենի | Ստեփանակերտի | №23 ընտրատարածք |
| Սարգսյան Աշոտ Գրիգորի | Ստեփանակերտի | №24 ընտրատարածք |
| Բաբայան Սամվել Անդրանիկի | Ստեփանակերտի | №25 ընտրատարածք |
| Ալեքսանյան Վալերի Ալեքսանդրի | Ստեփանակերտի | №26 ընտրատարածք |
| Սաֆարյան Հրանտ Ռաֆայելի | Ջանաղչու | №27 ընտրատարածք |
| Բարսեղյան Կամո Իվանի | Բալլուջայի | №28 ընտրատարածք |
| Միրզոյան Մաքսիմ Միքայելի | Դաշբուլաղի | №29 ընտրատարածք |
| Գալստյան Արշավիր Ալեքսանդրի | Նորագյուղի | №30 ընտրատարածք |
| Ծատուրյան Սուրեն Գուրգենի | Խանաբադի | №31 ընտրատարածք |
| (Քալասանյան Վիտալի Միքայելի) | | |
| Գաբրիելյան Ալյոշա Գրիգորի | Ասկերանի | №32 ընտրատարածք — 33 |
| Աբրահամյան Էմիլ Սամվելի | Հադրութի | №34 ընտրատարածք |

| | | |
|---|---|---|
| Հայրիյան Վաչագան Գրիգորի | Մեծ Թաղլարի | №35 ընտրատարածք |
| Գրիգորյան Վիգեն Սամվելի | Տողի | №36 ընտրատարածք |
| (Բալայան Սուսաննա Լևոնի) | | |
| Մկրտչյան Արթուր Ասլանի | Էդիլլվի | №37 ընտրատարածք |
| (Գրիգորյան Մանվել Սեկտորի) | | |
| Մուրադյան Իգոր Մարաթի | Թաղասերի | №38 ընտրատարածք |
| Հայրապետյան Գրիշա Ասծատուրի | Բանածորի | №39 ընտրատարածք |
| Աղաբեկյան Արթուր Ալեքսանդրի | Հաղորտի | №40 ընտրատարածք |
| Մովսեսյան Սլավա Մովսեսի | Մարտակերտի | №41 ընտրատարածք |
| Օհանջանյան Ներսես Միսակի | Մարտակերտի | №42 ընտրատարածք |
| Գալստյան Վագիֆ Լևոնի | Մարտակերտի | №43 ընտրատարածք |
| Պողոսյան Ժորա Շամիրի | Կարմիրավանի | №44 ընտրատարածք |
| Կարապետյան Ռոմա Արսենի | Լենինավանի | №45 ընտրատարածք |
| Վանյան Էդիկ Հովսեփի | Լենինավանի | №46 ընտրատարածք |
| Սնտոնյան Գուրգեն Վլասի | Այգեստանի | №47 ընտրատարածք |
| Սարգսյան Արարատ Դադիկի | Թալիշի | №48 ընտրատարածք |
| Բաղալյան Գրիշա Միսակի | Մաղավուզի | №49 ընտրատարածք |
| Ղահրամանյան Ջեմս Շամիրի | Հոռաթաղի | №50 ընտրատարածք |
| Գաբրիելյան Վահան Միքայելի | Ջանյաթաղի | №51 ընտրատարածք —52 |
| Աթաջանյան Վասիլի Աբգարի | Առաջաձորի | №53 ընտրատարածք |
| Հակոբյան Բորիս Խաչատուրի | Վանքի | №54 ընտրատարածք |
| (Դանիելյան Նորայր Էդուարդի) | | |
| (Ներսիսյան Գուրգեն Սիմոնի) | | |
| Սայիյան Ռաֆայել Ավանեսի | Դրմբոնի | №55 ընտրատարածք |
| Աղաբալյան Ռոմա Ջալալի | Գետավանի | №56 ընտրատարածք |
| Գրիգորյան Բարմեն Սերգեյի | Հաթերքի | №57 ընտրատարածք |
| (Աբրահամյան Սլավիկ Սամվելի) | | |
| Բալայան Զորի Հայկի | Մարտունու | №58 ընտրատարածք |
| 60 — Գասպարյան Գրիգորի Առաքելի | Մարտունու | №59 ընտրատարածք |
| Պետրոսյան Լեոնարդ Գեորգիի | Ճարտարի | №64 ընտրատարածք |
| Հովհաննիսյան Միքայել Արտաշի | Ճարտարի | №65 ընտրատարածք |
| Գրիգորյան Համլետ Վաղարշակի | Սոսի | №66 ընտրատարածք |
| Եսայան Օլեգ Եսայի | Կարմիր շուկայի | №67 ընտրատարածք |
| Իշխանյան Վաչագան Արտակի | Շուշիի | №68 ընտրատարածք |
| Սահակյան Բակո Սահակի | Շուշիի | №69 ընտրատարածք |
| 71, 72, 73 — Կասյան Վլադիմիր Սուրենի | Բերդաձորի | №70 ընտրատարածք |
| Առուշանյան Վաղարշակ Բեհբուդի | Քարին տակի | №74 ընտրատարածք |
| (Հովհաննիսյան Գրիշա Համբարձումի) | | |



| | | |
|---|---|---|
| Խդրյան Հակոբ Իսրայելի | Շահումյանի | №75 ընտրատարածք |
| Առուստամյան Ռոմա Բեգլարի | Շահումյանի | №76 ընտրատարածք |
| Ջլավյան Արկադի Հրանտիկի | Վերին Շենի | №77 ընտրատարածք |
| Չալյան Սերգեյ Ռուբենի | Վերին Շենի | №78 ընտրատարածք |
| Ոսկանյան Սամսոն Ջիմշատի | Կարաչինարի | №79 ընտրատարածք |
| Հովսեփյան Շահեն Վարդգեսի | Կարաչինարի | №80 ընտրատարածք |
| Մեղրյան Շահեն Զինավորի | Գյուլիստանի | №81 ընտրատարածք |

Շատ ու շատ քաջարի արցախցիների հետ միասին մեզ պարտադրված պատերազմում իրենց կյանքն են զոհաբերել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին գումարման պատգամավորներ

Վաղարշակ Բեյբուդի Առուշանյանը
Վագիֆ Լևոնի Գալստյանը
Ժորա Շամիրի Պողոսյանը
Բորիս Խաչատուրի Հակոբյանը
Նորայր Էդուարդի Դանիելյանը
Բարմեն Սերգեյի Գրիգորյանը
Սուրեն Գուրգենի Ծատրյանը
Բորիս Գուրգենի Բաբայանը
Շահեն Զինավորի Մեղրյանը
Վիգեն Սամվելի Գրիգորյանը

[illegible] չեն եղել 6 [illegible]

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշմամբ 1995 թվականի ապրիլի 30-ին անցկացվել են ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների վաղաժամկետ ընտրություններ. վաղաժամկետ, որովհետեւ գործող Գերագույն խորհրդի լիազորությունները ավարտվում էին 1996 թվականի դեկտեմբերին:

Գերագույն խորհրդի որոշման համաձայն հանրապետության տարածքում կազմավորվել են 33 ընտրատարածքներ նախկինի 81-ի փոխարեն: Բնականաբար խորհրդարանում համապատասխանորեն պակասել են պատգամավորական տեղերը: Ընտրողների ճշգրտված թվաքանակից ելնելով 33 ընտրատարածքները բաշխվել են հետեւյալ կերպ՝

| | | |
|---|---|---|
| Քաղաք Ստեփանակերտ | - | 12 |
| Ասկերանի շրջան | - | 4 |
| Մարտունու շրջան | - | 6 |
| Մարտակերտի շրջան | - | 5 |
| Հադրութի շրջան | - | 3 |
| Շուշիի շրջան | - | 1 |
| Շահումյանի շրջան | - | 1 |
| Քաշաթաղի շրջան | - | 1 |

Ընտրատարածքներում ընտրողների թիվը, բացառությամբ Շահումյանի եւ Քաշաթաղի շրջանների, կազմել է 2300-2600:

Գերագույն խորհրդի որոշման համաձայն խորհրդարանը, ի տարբերություն նախկինի, կլինի մշտական գործող պրոֆեսիոնալ խորհրդարան: Այդ նշանակում է, որ պատգամավորների հիմնական զբաղմունքը պետք է լինի ԼՂՀ օրենքների մշակումը, ընդունումը եւ վերահսկումը:

Ի տարբերություն ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման ժողովրդական պատգամավորների ընտրությունների, Ազգային ժողովի ընտրությունները անցկացվել են հրադադարի



պայմաններում, ուստի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովները հնարավորություն են ունեցել քաղաքական այդ կամպանիան անցկացնել կազմակերպված եւ ընտրողների ակտիվ մասնակցությամբ:

Ամփոփելով ԼՂՀ ԱԺ պատգամավորների ընտրությունների վերջնական արդյունքները նշենք, որ դրանք տեղի են ունեցել 31 ընտրատարածքներում եւ անցկացվել են բարձր կազմակերպվածությամբ, ընտրողների ակտիվ մասնակցությամբ: Ահա արդյունքները.

| | | |
|---|---|---|
| Ստեփանակերտ քաղաքում | - | 67,8 տոկոս |
| Ասկերանի շրջանում | - | 93,4 տոկոս |
| Շուշիի շրջանում | - | 81,4 տոկոս |
| Հադրութի շրջանում | - | 97,9 տոկոս |
| Մարտունու շրջանում | - | 91,5 տոկոս |
| Մարտակերտի շրջանում | - | 91,7 տոկոս |
| Շահումյանի շրջանում | - | 96,0 տոկոս |
| Քաշաթաղի շրջանում | - | 64,7 տոկոս |
| Ընդամենը հանրապետությունում | - | 73,9 տոկոս |

Ստեփանակերտ քաղաքի թիվ 12 եւ Հադրութի շրջանի թիվ 18 ընտրատարածքներում ընտրությունները չեն կայացել պատգամավորության մեկական թեկնածուների ինքնաբացարկ հայտարարելու պատճառով:

Մանրամասն ստուգելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին արձանագրությունները, համաձայն «ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի 33-րդ հոդվածի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 1995 թվականի մայիսի 5-ի նիստում միաձայն որոշում է ընդունել ԼՂՀ Ազգային ժողովի 23 պատգամավորների գրանցման մասին:

ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններին մասնակցել են միջազգային անկախ դիտորդներ, մասնավորապես Գերմանիայի Բունդեստագի անդամ Դիտրիխ Շպերլինգը, Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի անդամներ Անդրեյ Նույկինը, Վալենտին Միխայլովը, Մոսկվայում գործող ռուս-



***

1995 թ. հունիսի 23-ին բացվեց ԼՂՀ նորընտիր խորհրդարանի առաջին նիստը, որը, համաձայն «Ազգային ժողովի մասին» ԼՂՀ օրենքի 4 հոդվածի, մինչեւ Ազգային ժողովի նախագահի ընտրվելը վարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Մ. Օհանջանյանը:

Ազգային ժողովը փակ գաղտնի քվեարկությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ ընտրեց Կարեն Զարմայրի ԲԱԲՈՒՐՅԱՆԻՆ:

***

հայկական նախաձեռնությունների կենտրոնի ներկայացուցիչ Անահիդա Բեստավաշվիլին, Հայաստանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ղեկավար Անահիտ Բայանդուրը, հասարակական գործիչներ Ինեսա Բուրկովան, Գալինա Նույկինան, բազմաթիվ լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Նրանց կողմից կազմված ակտում, որը պահվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, ասվում է.

«Մենք, ներքոստորագրյալներս, 1995 թվականի ապրիլի 30-ից մինչեւ մայիսի 2-ը մասնակցել եւ հետեւել ենք ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններին:

Մենք եղել ենք Ստեփանակերտ քաղաքի թիվ 2, 7, 9, 4 եւ 8 ընտրական տեղամասերում, Մարտունու շրջանի Գիշու թիվ 23 եւ Շուշիի շրջանի թիվ 13 ընտրատարածքներում: Մասնակցել ենք Ստեփանակերտի թիվ 7 ընտրական տեղամասում ընտրությունների արդյունքների ամփոփմանը: Հանդիպումներ ենք ունեցել առաջադրված թեկնածուների վստահված անձանց, ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հետ, ուսումնասիրել ենք ընտրական փաստաթղթերը:



Մենք եկել ենք այն եզրակացության, որ ընտրությունները անցկացվել են «ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան, չենք արձանագրել խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ընտրությունները անցկացվել են գործնական ժողովրդավարական մթնոլորտում, ընտրողների ակտիվ մասնակցությամբ: Դիտորդները ունեցել են բոլոր հնարավորությունները իրենց ֆունկցիաները կատարելու գործում:

Մաղթել ենք տեղամասային, ընտրատարածքային եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովներին հետագայում էլ ավելի կատարելագործել ընտրական գործընթացը»:

1995 թվականի մայիսի 15-ին 5 ընտրատարածքներում անց է կացվել կրկնական քվեարկություն:

1995 թվականի հունիսի 30-ին 5 ընտրատարածքներում անց են կացվել նոր ընտրություններ:

Այսպիսով՝ 1995 թվականին կայացած ընտրությունների ժամանակ ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորներ են ընտրվել.

| | | |
|---|---|---|
| Գաբրիելյան Էմմա Պավելի | Ստեփանակերտի | №1 ընտրատարածք |
| Սարգսյան Արթուր Ավետիսի | Ստեփանակերտի | №2 ընտրատարածք |
| Գրիգորյան Գարիկ Էդուարդի | Ստեփանակերտի | №3 ընտրատարածք |
| Բաբայան Աշոտ Զավենի | Ստեփանակերտի | №4 ընտրատարածք |
| Սարգսյան Մանուշակ Ալեքսանդրի | Ստեփանակերտի | №5 ընտրատարածք |
| Պետրոսյան Մուրադ Ազատի | Ստեփանակերտի | №6 ընտրատարածք |
| Գաբրիելյան Լավրենտ Բենիկի | Ստեփանակերտի | №7 ընտրատարածք |
| Հայրապետյան Սեյրան Խորենի | Ստեփանակերտի | №8 ընտրատարածք |
| Առուշանյան Բորիս Սերգեյի | Ստեփանակերտի | №9 ընտրատարածք |
| Համբարձումյան Միքայել Բախտուրի | Ստեփանակերտի | №10 ընտրատարածք |
| Սարգսյան Աշոտ Գրիգորի | Ստեփանակերտի | №11 ընտրատարածք |
| Սարգսյան Լիդիա Իոսիֆի | Ստեփանակերտի | №12 ընտրատարածք |
| Խաչատրյան Վալերի Սերգեյի | Շուշիի | №13 ընտրատարածք |
| Առուշանյան Սլավիկ Առուշանի | Ասկերանի | №14 ընտրատարածք |
| Գրիգորյան Ալվինա Ալեքսանդրի | Նորագյուղի | №15 ընտրատարածք |
| Ղարամյան Անդրեյ Սուրենի | Շոշի | №16 ընտրատարածք |
| Բաբայան Բելա Արկադիի | Բալլուջայի | №17 ընտրատարածք |
| Օհանջանյան Կարեն Լեւոնի | Հաղրութի | №18 ընտրատարածք |
| Համբարձումյան Նովելլա Բախտուրի | Մեծ Թաղլարի | №19 ընտրատարածք |
| Մայիսյան Ռաֆիկ Բախշիի | Ուխտաձորի | №20 ընտրատարածք |

| | | |
|---|---|---|
| Հովսեփյան Անգելինա Վլադիմիրի | Մարտունու | №21 ընտրատարածք |
| Սողոմոնյան Արկադի Իվանի | Բերդաշենի | №22 ընտրատարածք |
| Ղարիբյան Կարեն Բենիկի | Գիշիի | №23 ընտրատարածք |
| Թովմասյան Արթուր Բենիկի | Գյունե Կալերի | №24 ընտրատարածք |
| Հարությունյան Մերուժան Միքայելի | Սոսի | №25 ընտրատարածք |
| Բաբուրյան Կարեն Զարմայրի | Կարմիր շուկայի | №26 ընտրատարածք |
| Օհանջանյան Ներսես Միսակի | Մարտակերտի | №27 ընտրատարածք |
| Կարապետյան Ռոմա Ապրեսի | Մաղավուզի | №28 ընտրատարածք |
| Աթաջանյան Վասիլի Աբգարի | Դրմբոնի | №29 ընտրատարածք |
| Մարտիրոսյան Ռուդիկ Գեորգիի | Առաջաձորի | №30 ընտրատարածք |
| Իսկանդարյան Կոլյա Սուրենի | Հաթերքի | №31 ընտրատարածք |
| Մարյանյան Սյոմիկ Մեսրոպի | Շահումյանի | №32 ընտրատարածք |
| Անտոնյան Միրա Ռաֆայելի | Քաշաթաղի | №33 ընտրատարածք |

1996 թվականի հուլիսի 21-ին, 1997 թվականի նոյեմբերի 23-ին եւ 1998 թվականի դեկտեմբերի 27-ին անց են կացվել Մարտունու թիվ 21 (երկու անգամ), Ստեփանակերտի թիվ 5, 10 եւ 12, Մեծ Թաղլարի թիվ 19, Գիշիի թիվ 23 ընտրատարածքներում Ազգային ժողովի պատգամավորների լրացուցիչ ընտրություններ: ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորներ են ընտրվել Մարտունու թիվ 21 ընտրատարածքում՝ Սերգեյ Մարտինի Արզումանյանը, հետագայում՝ Կարեն Սարգսի Արամյանը, Ստեփանակերտի թիվ 5 ընտրատարածքում՝ Կարեն Արմոյի Ներսիսյանը, թիվ 10 ընտրատարածքում՝ Հրանտ Խորենի Խաչատրյանը, թիվ 12 ընտրատարածքում՝ Օլեգ Եսայի Եսայանը, Մեծ Թաղլարի թիվ 19 ընտրատարածքում՝ Վարդգես Բորիսի Բաղրյանը եւ Գիշիի թիվ 23 ընտրատարածքում՝ Մխիթար Երջանիկի Ավագյանը:



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1996 թվականի օգոստոսի 29-ին ԼՂՀ Ազգային ժողովը որոշում է ընդունել նոյեմբերի 24-ին անցկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրություն:

Այդ քաղաքական միջոցառումը բարձր կազմակերպվածությամբ անցկացնելու համար անհրաժեշտ էր լուրջ նախապատրաստական աշխատանքներ կատարել:

Ազգային ժողովի հանձնաժողովներում, նստաշրջանում շահագրգիռ քննարկումներից հետո ընդունվել է «ԼՂՀ նախագահի ընտրությունների մասին» օրենքը: Օրենքը հրապարակվել է «ԼՂ Հանրապետություն» թերթում եւ տպագրվել առանձին բրոշյուրով:

Ճշտվել է Ստեփանակերտ քաղաքի եւ հանրապետության յոթ շրջանների ընտրողների թվաքանակը ըստ բնակության վայրի եւ տարիքի: Շրջանային (քաղաքային) վարչակազմերի հետ միասին կազմվել է ընտրական տեղամասերի ցանկը:

Ութ շրջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների եւ 171 տեղամասային ընտրական հանձնաժողովների համար պատրաստվել են հատուկ կնիքներ:

Որակյալ թղթից պատրաստվել են ընտրական բոլոր փաստաթղթերի ձեւերը՝ սկսած ԼՂՀ նախագահի թեկնածուների առաջադրման եւ պաշտպանման ձեւաթղթից, շրջանային (քաղաքային) եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններից մինչեւ նոր նախագահին տրվելիք վկայականը:

Կազմվել է ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ծախսերի նախահաշիվը ինչպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, այնպես էլ շրջանային (քաղաքային) եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների համար:

Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայում պատրաստվել է 100 քվեատուփ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների համար: Ձեռք են բերվել պահանջվող քանակությամբ թուղթ եւ գրենական պիտույքներ՝ ընտրողների ցուցակները կազմելու, ցուցադրական ագիտացիայի եւ այլ աշխատանքներ կազմակերպելու համար:



Ռոբերտ Սեդրակի ՔՈՉԱՐՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ

Հաստատվել է ԼՂՀ նախագահի ընտրության նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների օրացուցային պլանը:

Ստեփանակերտ քաղաքի եւ շրջանային վարչակազմերի հետ միասին կազմավորվել են Ստեփանակերտի քաղաքային եւ յոթ շրջանային ընտրական հանձնաժողովներ՝ կազմված 5-7 անդամից: Կազմավորվել են նաեւ 171 տեղամասային ընտրական հանձնաժողովներ՝ յուրաքանչյուրում 5-7 հոգի:

Շրջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների նախագահներ են ընտրվել՝ Ստեփանակերի քաղաքում՝ Վ. Մ. Ջավադյանը, Ասկերանի շրջանում՝ Ա. Մ. Ծատրյանը, Մարտունու շրջանում՝ Ս. Ա. Սեյրանյանը, Մարտակերտի շրջանում՝ Ս. Գ. Հովսեփյանը, Հադրութի շրջանում՝ Է. Մ. Դավթյանը, Շուշիի շրջանում՝ Ռ. Ս. Միրզոյանը, Շահումյանի շրջանում՝ Խ. Գ. Սահակյանը եւ Քաշաթաղի շրջանում՝ Բ. Ա. Եսայանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահի ընտրությունը համընկել է ԼՂՀ հռչակման 5-րդ տարեդարձին: Պատմական այդ կարճ ժամանակահատվածը հագեցված է եղել մեր երկրամասի ճակատագրի համար կարեւոր իրադարձություններով: Արցախահայությունը, սատար ունենալով համայն հայության նյութական եւ բարոյական օժանդակությունը, կարողացավ թշնամուն հեռու վանել մեր երկրամասի սահմաններից, ռազմական փայլուն հաղթանակներ տանել ռազմի դաշտում: Օգտվելով ստեղծված զինադադարից, ԼՂՀ իշխանությունները ձեռնարկել են բոլոր միջոցները մեր երիտասարդ պետականության ամրապնդման, նրա միջազգային ճանաչման համար:

Պատահական չէ, որ ԼՂՀ նախագահի ընտրությունը մեծ աղմուկ-աղաղակ է առաջացրել հարեւան հանրապետությունում: Այդ ընտրությունը մեկ անգամ եւս համոզեց մեր թշնամիներին, թե ղարաբաղցին ինչքան է վստահ իր վաղվա օրվա հանդեպ, իր արդար գործի վերջնական հաղթանակի հանդեպ եւ պատերազմական պայմաններում անգամ կարողանում է կազմակերպել նման կարեւոր քաղաքական միջոցառում:

Համաձայն «ԼՂՀ նախագահի ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի, քննարկելով հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու մասին փաստաթղթերը, թեկնածուի պաշտպանության մասին ստորագրությունների ձեւաթղթերը, թեկնածուի գրավոր համաձայնությունը, գրանց-

ման եւ բնակության վայրի մասին տեղեկանքը, ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 1996 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 14 որոշմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի թեկնածուներ է գրանցել`

| | | |
|---|---|---|
| 1. Բորիս Սերգեյի Առուշանյանին | - | 1948 թվականի ծնված, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, անկուսակցական |
| 2. Հրանտ Սերգեյի Մելքումյանին | - | 1951 թվականի ծնված, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, ԼՂՀ շինարարության նախարարության գլխավոր մասնագետ, ԼՂՀ կոմկուսի կազմկոմիտեի նախագահ |
| 3. Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին | - | 1954 թվականի ծնված, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, ԼՂՀ նախագահ, անկուսակցական |

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեռնարկել է բոլոր միջոցները գրանցված թեկնածուների ընտրարշավը անցկացնելու, զանգվածային լրատվության միջոցներից անվճար օգտվելու գործում հավասար պայմաններ ստեղծելու համար: Դեռ ավելին, թեկնածուներ Բորիս Առուշանյանին եւ Հրանտ Մելքումյանին օգնության կարգով հատկացվել է երկու հարյուր հազարական դրամ եւ պահանջվող քանակությամբ վառելիք` իրենց ընտրարշավը անցկացնելու համար:

1996 թվականի նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրություն: Ընտրությունը անց է կացվել բարձր կազմակերպվածությամբ եւ ընտրողների ակտիվ մասնակցությամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Մուշեղ Օհանջանյանը ընդլայնված նիստում հրապարակել է ընտրությունների վերջնական արդյունքները: Նշվել է, որ անցկացված նախագահական ընտրությունը առաջին հերթին մեր պայքարի շարունակությունն է, այն նորօրինակ հանրաքվե էր, որով նորից մեր ժողովուրդը հավաստեց բռնակալական լուծը մերժելու, սեփական ճակատագիրը տնօրինելու, ազատ ու անկախ ապրելու իր վճռական կամքը:

Հանրապետության 89.733 ընտրողներից ընտրությանը մասնակցել են 70.052 հոգի կամ ընտրողների ընդհանուր թվի 78,07 %-ը:





ԼՂՀ նախագահի ընտրության նախօրյակին Ստեփանակերտ են ժամանել միջազգային կազմակերպությունների տասնյակ դիտորդներ եւ լրագրողներ:

Ընտրողների մասնակցությունը ըստ վարչատարածքների.

| | | |
|---|---|---|
| քաղ. Ստեփանակերտ | - | 75,48 տոկոս |
| Ասկերանի շրջան | - | 92,3 տոկոս |
| Մարտունու շրջան | - | 91,4 տոկոս |
| Մարտակերտի շրջան | - | 56,3 տոկոս |
| Հադրութի շրջան | - | 87,7 տոկոս |
| Շուշիի շրջան | - | 82,5 տոկոս |
| Շահումյանի շրջան | - | 95,5 տոկոս |
| Քաշաթաղի շրջան | - | 82,4 տոկոս |

Համաձայն տեղամասային եւ շրջանային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված արձանագրությունների, ԼՂՀ նախագահի ընտրության քվեարկության ժամանակ անվավեր քվեաթերթիկների թիվը կազմել է 999 հատ, բոլոր թեկնածուների դեմ քվեարկողների քանակը` 1.286 հոգի:

ԼՂՀ նախագահի երեք թեկնածուների օգտին տրված ձայների քանակը կազմել է 67.755 հոգի, որից Բ. Առուշանյանի օգտին ձայն են տվել 4.801 հոգի կամ 8,09 տոկոսը, Հ. Մելքումյանի օգտին` 2.713 հոգի կամ 4,00 տոկոսը, Ռ. Քոչարյանի օգտին` 60.241 հոգի կամ 88,91 տոկոսը:

ԼՂՀ նախագահի երեք թեկնածուների օգտին տրված ձայների քանակը ըստ վարչատարածքների կազմել է՝

| | Բ. Առուշանյան | Հ. Մելքումյան | Ռ. Քոչարյան |
|---|---|---|---|
| ք. Ստեփանակերտ | 13,21 տոկոս | 7,14 տոկոս | 79,65 տոկոս |
| Ասկերանի շրջան | 9,81 տոկոս | 4,13 տոկոս | 86,06 տոկոս |
| Մարտունու շրջան | 2,91 տոկոս | 2,42 տոկոս | 94,66 տոկոս |
| Մարտակերտի շրջան | 3,31 տոկոս | 1,77 տոկոս | 94,91 տոկոս |
| Հադրութի շրջան | 2,76 տոկոս | 3,28 տոկոս | 93,94 տոկոս |
| Շուշիի շրջան | 9,26 տոկոս | 4,94 տոկոս | 85,80 տոկոս |
| Շահումյանի շրջան | 1,05 տոկոս | 0,55 տոկոս | 98,38 տոկոս |
| Քաշաթաղի շրջան | 0,70 տոկոս | 0,09 տոկոս | 99,22 տոկոս |

*Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ է ընտրվել Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը:*



1996 թ. դեկտեմբերի 23-ին կայացել է ԼՂՀ Ազգային ժողովի հատուկ նիստ՝ նվիրված ԼՂՀ առաջին նախագահ Ռոբերտ Քոչարյանի երդման արարողությանը: Նիստում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Օհանջանյանը շնորհավորեց Ռ. Քոչարյանին հանրապետության առաջին նախագահ ընտրվելու առիթով եւ նրան հանձնեց ընտրվելու մասին վկայական:



ԿԸՀ-ի նախագահը իր ելույթում մասնավորապես ասաց.

«Թույլ տվեք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, անձամբ իմ կողմից սրտանց, ամբողջ հոգով շնորհավորել Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին՝ ԼՂՀ նախագահ ընտրվելու կապակցությամբ, ցանկանալ նրան քաջառողջություն, երկար կյանք, մեր սկսած արդար գործի վերջնական հաղթանակի գործում մեծագույն հաջողություններ»:

Հանրապետության նորընտիր նախագահին շնորհավորել են բազմաթիվ պետական, հասարակական-քաղաքական գործիչներ, հանրապետության բազմաթիվ կոլեկտիվներ, առանձին անհատներ, այդ թվում նախագահի թեկնածուներ Բ. Առուշանյանը եւ Հ. Մելքումյանը:

ԼՂՀ նախագահի ընտրության անցկացման ընթացքը վերահսկելու նպատակով հանրապետությունում էին գտնվում անկախ դիտորդներ:

Դիտորդները առանձին խմբերով աշխատանք են կատարել Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի եւ Շուշիի շրջաններում:

Ընտրությունների ընթացքը լուսաբանել են արտասահմանյան երկրներից ժամանած զանգվածային լրատվության միջոցների տասնյակ լրագրողներ:

Դիտորդների եւ լրագրողների կողմից բարձր է գնահատվել ընտրական հանձնաժողովների եւ նախաձեռնող խմբերի կողմից կատարված աշխատանքը, գովասանքի խոսքեր են հնչել ընտրողների ակտիվ մասնակցության մասին:

Նրանց կողմից կազմված վերջնական ակտը հրապարակվել է մամուլում, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ:

Ընտրության նախնական արդյունքների հրապարակումից հետո ոչ մի գրավոր բողոք, գանգատ չի մտել Կենտրոնական ընտրական հանձնաժողով, դատաիրավական մարմիններ ինչպես ԼՂՀ նախագահի թեկնածուներից, այնպես էլ առանձին ընտրողներից:

Ամփոփելով ԼՂՀ նախագահի ընտրության վերջնական արդյունքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը իր երախտագիտությունն է հայտնել հանրապետության բոլոր ընտրողներին՝ ԼՂՀ նախագահի ընտրությանը ակտիվ մասնակցություն ունենալու համար:

Գոհունակություն է հայտնել հանրապետության կառավա-



Ձախից՝ Իվոն դե Շան՝ Ռոն-Ալպ մարզի ներկայացուցիչ, Վիլերբանի քաղաքապետի գրասենյակի տնօրեն եւ Ռենե Ռուքե Ալֆորվիլի քաղաքապետ, ֆրանսիական սենատի անդամ



Միխայիլ Ռոչչին
Մոսկվայի խաղաղարար կենտրոնի աշխատակից, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արեւելագիտության բաժնի աշխատակից

րությանը, Ազգային ժողովին, շրջանային (քաղաքային) վարչակազմերին, հասարակական քաղաքական եւ շահագրգիռ բոլոր կազմակերպություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ընտրական բոլոր հանձնաժողովներին եւ նախաձեռնող խմբերի ղեկավարներին՝ ԼՂՀ նախագահի ընտրությունը բարձր կազմակերպվածությամբ եւ ընտրողների ակտիվ մասնակցությամբ անցկացնելու գործում դրսեւորած օգնության համար:

Իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնել նախագահի ընտրությանը հրավիրված արտասահմանյան երկրներից ժամանած դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին՝ տրված գնահատականների, արված դիտողությունների եւ խորհուրդների համար:

## ԱԿՏ
## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՂՀ նախագահի ընտրության անցկացման ընթացքը վերահսկելու նպատակով 1996 թվականի նոյեմբերի 23-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում էր գտնվում անկախ դիտորդների խումբը:

Դիտորդները առանձին խմբերով աշխատանք են տարել Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Մարտակերտի, Հադրութի, Մարտունու եւ Շուշիի շրջաններում: Դիտորդները այցելել են ավելի քան 41 ընտրական տեղամասեր, մասնակցել ձայների հաշվման գործընթացին:

Անկախ դիտորդները հավաստում են.

Նախագահի ընտրությունը նախապատրաստվել, անցկացվել եւ արդյունքներն ամփոփվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան: ԼՂՀ տարածքում կազմավորվել էր 171 ընտրական տեղամաս: Տեղամասերի ցուցակը եւ շրջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել էին «ԼՂ Հանրապետություն» թերթում: Ընտրողների ցուցակում ընդգրկվել էր ձայնի իրավունք ունեցող 89.898 մարդ:



Անրի Սաքի
Եվրախորհրդարանի
պատվավոր անդամ



Արկադի Յանկովսկի
ՌԴ ՊԴ պատգամավոր,
«Ռուսաստանի տարածաշրջաններ»
խմբակցության անդամ



Սերգեյ Միտրոխին
ՌԴ Պետդումայի պատգամավոր



Անկախ մամուլի
ներկայացուցիչ (Ռուսաստան)



Անդրեյ Նույկին
ՌԴ Պետդումայի պատգամա-
վոր, հրապարակախոս



Գալինա Նույկինա
հրապարակախոս



Պավել Բուրդուկով
ՌԴ Պետդումայի պատգամավոր



Դմիտրի Ռագոզին
ԿՌՕ հասարակական
կազմակերպության նախագահ
(Ռուսաստան)

Գրանցվել էին ԼՂՀ նախագահի երեք թեկնածուներ, որոնց համար հավասար պայմաններ էին ստեղծվել ընտրարշավի ընթացքում: Քվեաթերթիկներում հանրապետության նախագահի յուրաքանչյուր թեկնածուի մասին տվյալների դիմաց նշված էին «համաձայն եմ» բառերը: Մեկ թեկնածուի օգտին ձայն տալու դեպքում քվեաթերթիկում ջնջվել են մյուս թեկնածուների տվյալների դիմաց նշված «համաձայն եմ» բառերը: Քվեաթերթիկները պատրաստված էին հայերեն եւ ռուսերեն լեզուներով: Դրանք տրվել են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ ստորագրությամբ:

Նախագահի թեկնածուների վստահված անձինք, քաղաքացիական նախաձեռնության կարգով ստեղծված շտաբների ներկայացուցիչները հնարավորություն ունեին հետեւելու քվեարկության ընթացքին, մասնակցելու յուրաքանչյուր ընտրական տեղամասում ձայների հաշվմանը:

Քվեարկության, քվեաթերթիկների տրման, դրանց ձեւակերպման, ձայների հաշվման ընթացակարգում դիտորդները խախտումների փաստեր չեն հայտնաբերել: Քվեարկության արդյունքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ է ընտրվել Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը:

| | |
|---|---|
| Սաբի Անրի Ժան<br>*Ֆրանսիա* | Եվրախորհրդարանի պատգամավոր |
| Գրավ Վեներա<br>*Շվեյցարիա* | Շվեյցարական կոնֆեդերացիայի ժողովուրդների իրավունքի եւ ազատության գլխավոր քարտուղար |
| Գրիգորյան Ժան<br>*Ֆրանսիա* | ԼՂՀ ներկայացուցիչը Ֆրանսիայում |
| Ռիխման Վոլֆգանգ Պաուլ<br>*Գերմանիա* | անկախ դիտորդ |
| Անտոնի Թոմաս<br>*ԱՄՆ* | դիտորդ |
| Վիդմար Այոնկա<br>*Սլովակիայի Հանրապետություն* | դիտորդ |



| | |
|---|---|
| Էռլիխ Ստեֆան<br>*Գերմանիա* | դիտորդ |
| Մարքս Ռոլֆ Էրիկ<br>*Գերմանիա* | դիտորդ |
| Յանկովսկի Արկադի Էդուարդի<br>*ՌԴ* | ՌԴ ՊԴ պատգամավոր, տուրիզմի եւ սպորտի կոմիտեի նախագահի տեղակալ |
| Բուրդուկով Պավել Տիմոֆեի<br>*ՌԴ* | ՌԴ ՊԴ պատգամավոր, անվտանգության կոմիտեի անդամ |
| Միտրոխին Սերգեյ Սերգեյի<br>*ՌԴ* | ՌԴ ՊԴ պատգամավոր, ինքնակառավարման կոմիտեի նախագահի տեղակալ |
| Ռագոզին Դմիտրի Օլեգի<br>*ՌԴ* | ԿՐՕ հասարակական կազմակերպության նախագահ |
| Նուժդինով Միխայիլ Վասիլիի<br>*ՌԴ* | ԿՐՕ հասարակական կազմակերպության փոխնախագահ |
| Նույկին Անդրեյ Ալեքսանդրի<br>*ՌԴ* | անկախ դիտորդ |
| Նույկինա Գալինա Վլադիմիրովնա<br>*ՌԴ* | անկախ դիտորդ |
| Տիտեկին Վյաչեսլավ Նիկոլայի<br>*ՌԴ* | դիտորդ, ՌԴ ՊԴ պատգամավոր |
| Ռենե Ռուքե<br>*Ֆրանսիա* | դիտորդ, սենատոր, Ալֆորվիլի քաղաքապետ |
| Իվոն դե Շան | դիտորդ, Ռոն-Ալպ ռեգիոնի խորհրդի անդամ, ընտրված Լիոն քաղաքից |
| Ռոշչին Միխայիլ | դիտորդ, Մոսկվայի խաղաղարար կենտրոն |
| Մեսսաննա Պաոլա | ԱՊՀ Ֆրանս-պրես գործակալության տնօրեն |

| | |
|---|---|
| Սլոտայա Եկատերինա<br>*Ռուսիա* | «Նեզավիսիմայա գազետա» թերթի թղթակից |
| Սուրիկով Անտոն Վիկտորի | «Պրավդա 5» թերթի խմբագիր |
| Ռոստ Յուրի Միքայելի | թղթակից |
| Ֆիորիտո Ջոզեֆ<br>*Կանադա* | «Մոնրեալ» թերթի թղթակից |
| Կարդոսո Օսկար Ռաուլ<br>*Արգենտինա* | «Կլարին» թերթի թղթակից |
| Ծարխանյան Կրիքոր<br>*ԱՄՆ* | Հայաստանի ինֆորմկենտրոնի աշխատակից |
| Սիվասլյան Սաքս<br>*Ֆրանսիա* | «Նուվել դե Արմենի» ամսագրի ֆոտոթղթակից |
| Գեւորգյան Տիգրան<br>ՀՀ | ՀՀ ռադիոհեռուստավարչության օպերատոր |
| Մուրադյան Սուրիկ<br>ՀՀ | ՀՀ ռադիոհեռուստավարչության օպերատոր |
| Յովհաննիսյան Արթուր | «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության թղթակից ՀՀ-ում |
| Պետրոսյան Գրիգորի<br>ՀՀ | ..———————.—.. |
| Նալբանդյան Գնել<br>ՀՀ | «Ավրորա» ռադիոկայանի թղթակից |
| Սուխիսյան Արփեն<br>ՀՀ | «Լրաբեր» ծրագրի թղթակից |
| Կոփկորովա Ժաննա<br>ՀՀ | «Նոյան տապան» գործակալության թղթակից |
| Ասծատրյան Յակոբ<br>ՀՀ | «Ազգ» թերթի թղթակից |
| Ծաղեւոսյան Արա<br>ՀՀ | «Մոսկովսկիե նովոստի» թերթի թղթակից |



| | |
|---|---|
| Էվոյան Սամվել<br>ՀՀ | «Երեւան» ինֆորմկենտրոնի թղթակից |
| Սարկիսյան Էվելինա<br>ՀՀ | «Փաստ» գործակալության թղթակից |
| Խումարյան Կորյուն<br>ՀՀ | «Մայակ» ռադիոկայանի թղթակից |
| Խաչատրյան Մխիթար<br>ՀՀ | «Արմենպրես» գործակալության թղթակից |
| Զորյան Հրայր<br>ՀՀ | «Արմենպրես» գործակալության բաժնի վարիչ |
| Պիսարենկո Դմիտրի<br>ՀՀ | HTB հեռուստաընկերության թղթակից |
| Մանուկյան Գեւորգ<br>ՀՀ | HTB հեռուստաընկերության ասիստենտ |
| Հակոբյան Յովհաննես<br>ՀՀ | HTB հեռուստաընկերության օպերատոր |
| Նազարյան Վլադիմիր<br>ՀՀ | OPT-ի թղթակից |
| Գրիգորյան Լեւոն<br>ՀՀ | OPT-ի թղթակից |
| Թոփչյան Կարեն<br>ՀՀ | Բի-Բի-Սի ռադիոկայանի թղթակից |
| Միրզոյան Ռենալ<br>ՀՀ | ՀՀ հեռուստատեսության թղթակից |
| Ղանիելյան Վաչիկ<br>ՀՀ | ՀՀ հեռուստատեսության թղթակից |
| Մովսեսյան Գայանե<br>ՀՀ | «ՍՆԱՐՔ»-ի թղթակից |
| Սախինով Էդուարդ<br>ՀՀ | «Վեստի»-ի թղթակից |

ԼՂՀ նախագահի ընտրության քվեարկության վերջնական արդյունքները

30.11.1996 թ.

| շրջանները | ընտրող. թիվը ըստ ցուցակի | գրանցված ու քվեարկ. մասնակ. ընտ. թիվը | մասնակցը | անվավեր քվեաթ. թիվը | բոլոր թեկ. դեմ քվ. քվեաթ. թիվը | կողմ ձայն տված քվեար. քանակը | | | թեկնածուների օգտին տրված ձայն. ընդհ. քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Առուշանյան Բ. Ս. | Մելքումյան Գ. Ա. | Քոչարյան Ռ. Ս. | |
| Ք. Ստեփանակերտ | 28789 | 21731 | 75,48 | 556 | 729 | 2701<br>13,21 | 1459<br>7,14 | 16286<br>79,65 | 20446 |
| Ասկերան | 10721 | 9900 | 92,3 | 111 | 151 | 945<br>9,81 | 398<br>4,13 | 8288<br>86,06 | 9631 |
| Մարտակերտ | 19404 | 10925 | 56,3 | 38 | 64 | 359<br>3,31 | 192<br>1,77 | 10270<br>94,91 | 10821 |
| Մարտունի | 15206 | 13900 | 91,4 | 85 | 209 | 396<br>2,91 | 330<br>2,43 | 12880<br>94,66 | 13606 |
| Հադրութ | 8212 | 7206 | 87,7 | 38 | 89 | 197<br>2,76 | 232<br>3,28 | 6648<br>93,94 | 7077 |
| Շուշի | 2313 | 1909 | 82,5 | 93 | 33 | 165<br>9,26 | 88<br>4,94 | 1529<br>85,80 | 1782 |
| Քաշաթաղ | 2674 | 2367 | 82,4 | 63 | 8 | 16<br>0,70 | 2<br>0,09 | 2278<br>99,22 | 2296 |
| Շահումյան | 2214 | 2114 | 95,5 | 15 | 3 | 22<br>1,05 | 12<br>0,55 | 2062<br>98,38 | 2096 |
| Ընդամենը | 89733 | 70052 | 78,07 | 999 | 1286 | 4801<br>7,09 | 2713<br>4,00 | 60241<br>88,91 | 67755 |

*ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝* *Ս. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ*



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ Ռոբերտ Քոչարյանին Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակելու կապակցությամբ անհրաժեշտ էր անցկացնել հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն:

ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 1 հոդվածի, հանրապետության նախագահի արտահերթ ընտրության օրը հայտարարել է 1997 թվականի սեպտեմբերի 1-ը:

Շրջանային (քաղաքային) վարչակազմերի հետ միասին վերակազմավորվել եւ կազմավորվել է 8 շրջանային (քաղաքային) եւ 171 տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմը, կազմվել է արտահերթ ընտրության նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների օրացուցային պլանը:

Ի տարբերություն նախորդ ընտրության, արտահերթ ընտրության ժամանակ բավականին սեղմ ժամկետներ էին սահմանված ընտրարշավը անցկացնելու համար, մասնավորապես նախագահի թեկնածուների առաջադրման, պաշտպանման, գրանցման, ընտրողների հետ հանդիպման ժամկետները:

Համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի 9 հոդվածի, քննարկելով հանրապետության նախագահի թեկնածու առաջադրվելու մասին թեկնածուների գրավոր համաձայնությունը, գրանցման եւ բնակության վայրի մասին տեղեկանքը, ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը իր 1997 թ. օգոստոսի 20-ի թիվ 23 որոշմամբ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի թեկնածուներ է գրանցել

| | |
|---|---|
| Բորիս Սերգեյի Առուշանյանին | 1948 թվականին ծնված, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, անկուսակցական |



Արկադի Արշավիրի ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ

| | |
|---|---|
| Արթուր Բաբկենի Թովմասյանին | 1962 թվականի ծնված, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ, անկուսակցական |
| Արկադի Արշավիրի Ղուկասյանին | 1957 թվականի ծնված, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, ԼՂՀ արտաքին գործերի նախարար, անկուսակցական |

1997 թվականի սեպտեմբերի 1-ին՝ մեր ազատ ու անկախ, ինքնիշխան հանրապետության անկախության տարելիցի նախօրյակին, տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն: Ընտրությունն անց է կացվել բարձր կազմակերպվածությամբ եւ ընտրողների ակտիվ մասնակցությամբ:

Ամփոփելով արտահերթ ընտրության վերջնական արդյունքները՝ ԿԸՀ նախագահ Մ. Օհանջանյանը ընդլայնված նիստում նշել է, որ հանրապետության ընտրողների 90.137 թվից ընտրությանը մասնակցել են 76.257 հոգի կամ ընտրողների ընդհանուր թվի 84,6 տոկոսը:

Ընտրողների մասնակցությունը ըստ վարչատարածքների կազմել է՝

| | |
|---|---|
| քաղ. Ստեփանակերտ | - 84,7% |
| Ասկերանի շրջան | - 94,7% |
| Մարտունու շրջան | - 91,4% |
| Մարտակերտի շրջան | - 64,0% |
| Հադրութի շրջան | - 91,3% |
| Շուշիի շրջան | - 86,9% |
| Շահումյանի շրջան | - 99,0% |
| Քաշաթաղի շրջան | - 99,1% |

Համաձայն տեղամասային եւ շրջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված արձանագրությունների, ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրության քվեարկության ժամանակ անվավեր քվեաթերթիկների թիվը կազմել է 1.123 հատ, բոլոր թեկնածուների դեմ քվեարկողների քանակը՝ 1293 հոգի:

ԼՂՀ նախագահի երեք թեկնածուների օգտին տրված ձայների քանակը կազմել է 73.822, որից Բ. Առուշանյանի օգտին ձայն են տվել 3.936 հոգի կամ 5,33%-ը, Ա. Թովմասյանի օգտին՝ 3.953 հոգի կամ 5,35%-ը, Ա. Ղուկասյանի օգտին՝ 65.933 հոգի կամ 89,32%-ը:

Հանրապետության նախագահի երեք թեկնածուների օգտին տրված ձայների քանակն ըստ վարչատարածքների կազմել է՝

| | Բ. Առուշանյան | Ա. Թովմասյան | Ա. Ղուկասյան |
|---|---|---|---|
| ք. Ստեփանակերտ | 10,3% | 7,7% | 82,0% |
| Ասկերանի շրջան | 5,8% | 6,7% | 87,5% |
| Մարտունու շրջան | 2,6% | 6,0% | 91,4% |
| Մարտակերտի շրջան | 1,6% | 1,1% | 97,3% |
| Հադրութի շրջան | 4,1% | 3,5% | 92,4% |
| Շուշիի շրջան | 2,2% | 7,3% | 90,5% |
| Շահումյանի շրջան | 2,2% | 2,2% | 95,6% |
| Քաշաթաղի շրջան | 1,0% | 2,5% | 96,5% |

*Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ է ընտրվել Արկադի Արշավիրի Ղուկասյանը:*



1997 թ. սեպտեմբերի 8-ին կայացել է ԼՂՀ Ազգային ժողովի հատուկ նիստ՝ նվիրված հանրապետության նորընտիր նախագահի Արկադի Ղուկասյանի երդման արարողությանը: ԿԸՀ նախագահ Մ. Օհանջանյանը շնորհավորեց Ա. Ղուկասյանին հանրապետության նախագահ ընտրվելու կապակցությամբ եւ նրան հանձնեց ընտրվելու մասին վկայական:





Շնորհավորանքներ ԼՂՀ նախագահին
Ձախից աջ՝ Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյան, ՀՀ-ում ՌԴ նախկին դեսպան Վլադիմիր Ստուպիշին, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյան, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյան

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր լրիվ կազմով շրջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների նախագահների հետ միասին ընտրությունների նախնական արդյունքներն ամփոփելուց հետո ջերմորեն շնորհավորել է Արկադի Ղուկասյանին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ ընտրվելու կապակցությամբ:

Հանրապետության նորընտիր նախագահին շնորհավորել են բազմաթիվ պետական, հասարակական-քաղաքական գործիչներ, հանրապետության բազմաթիվ կոլեկտիվներ, առանձին անհատներ, այդ թվում՝ նախագահի մյուս թեկնածուները:

ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրության անցկացման ընթացքը վերահսկելու նպատակով հանրապետությունում էին գտնվում հինգ երկրներից՝ Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Շվեյցարիա, Ուկրաինա, Հայաստանի Հանրապետություն, ավելի քան 40 դիտորդներ եւ բազմաթիվ լրագրողներ:

Համեմատաբար մեծաքանակ էր Հայաստանի Հանրապետությունից ժամանած դիտորդների եւ լրագրողների պատվիրա-

կությունը: Նրանց շարքերում էին Ազգային ժողովի պատգամավորներ, հասարակական-քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

Դիտորդներն առանձին խմբերով աշխատանք են կատարել Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի եւ Շուշիի շրջաններում: Նրանք այցելել են 45 ընտրական տեղամասեր, մասնակցել ձայների հաշվման գործընթացին:

Դիտորդների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրության արդյունքների մասին կազմվել է ակտ, որը հրապարակվել է զանգվածային լրատվության միջոցներով:

Մեզ համար անչափ հաճելի է, որ բոլոր դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները միահամուռ հավաստել են, որ *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունն անցկացվել է համընդհանուր ժողովրդավարական նորմերին համապատասխան, հրապարակայնորեն, ազատ եւ արդար, ընտրողների բարձր ակտիվության պայմաններում:*

Դիտորդների եւ լրագրողների կողմից բարձր է գնահատվել ընտրական բոլոր հանձնաժողովների եւ նախաձեռնող խմբերի կողմից կատարված աշխատանքը: Նրանք քվեարկության, քվեաթերթիկների տրման, դրանց ծեւակերպման, ձայների հաշվման ընթացակարգում խախտումների փաստեր չեն հայտնաբերել:

Արտահերթ ընտրության նախնական արդյունքների հրապարակումներից հետո ոչ մի գրավոր բողոք, գանգատ չի մտել Կենտրոնական ընտրական հանձնաժողով, դատախազական մարմիններ ինչպես ԼՂՀ նախագահի թեկնածուներից, նրանց վստահված անձերից եւ նախաձեռնող խմբերից, այնպես էլ առանձին ընտրողներից:

Ամփոփելով ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրության վերջնական արդյունքները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր երախտագիտությունն է հայտնել հանրապետության բոլոր ընտրողներին՝ արտահերթ ընտրությանն ակտիվ մասնակցություն ունենալու համար:

Գոհունակություն է հայտնել հանրապետության կառավա-



րությանը, Ազգային ժողովի պատգամավորներին, Ստեփանակերտի քաղաքային եւ շրջանների վարչակազմերին, հասարակական-քաղաքական եւ շահագրգիռ բոլոր կազմակերպություններին, գյուղապետերին, զանգվածային լրատվության միջոցների աշխատողներին, շրջանային (քաղաքային) եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներին, նախաձեռնող խմբերին, հատկապես Արկադի Ղուկասյանի նախաձեռնող խմբին (ղեկավար՝ Ժիրայր Պողոսյան) ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրությունը բարձր կազմակերպվածությամբ եւ ընտրողների ակտիվ մասնակցությամբ անցկացնելու գործում դրսեւորած օգնության եւ օժանդակության համար:

Իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնել ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրությանը մասնակցած արտասահմանյան երկրներից ժամանած դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին՝ տրված գնահատականների, արած դիտողությունների եւ խորհուրդների համար:

## ԱԿՏ
## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրության անցկացման ընթացքը վերահսկելու նպատակով 1997 թ. օգոստոսի 31-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում էր գտնվում անկախ դիտորդների խումբը:

Դիտորդները առանձին խմբերով աշխատանք են կատարել Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Մարտակերտի, Հադրութի, Մարտունու եւ Շուշիի շրջաններում:

Դիտորդները այցելել են 45 ընտրական տեղամասեր, մասնակցել ձայների հաշվման գործընթացին:

Անկախ դիտորդները հավաստում են.

Արտահերթ ընտրությունը նախապատրաստվել, անց է կացվել արդյունավետ, ամփոփվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան: ԼՂՀ տարածքում կազմավորվել էր 171 ընտրական տեղամաս: Տեղամասերի ցուցակը եւ շր-

## ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրության քվեարկության վերջնական արդյունքները

*1 սեպտեմբերի 1997 թ.*

| ԼՂՀ վարչատարածքային միավորները | Ընտրողների ընդհանուր թիվը ըստ ընտրողների ցուցակների | Քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհ. թիվը | Տոկոսը | Անվավեր ճանաչ. քվեաթ. թիվը | Բոլոր թեկ. դեմ տրված ձայների ընդհ. թիվը | Բոլոր թեկնածուների օգտին տրված ձայն. ընդհ. թիվը | Յուրաքանչյուր թեկնածուի օգտին տրված ձայների թիվը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Առուշանյան Բ. Ս. | | Ծովմասյան Ա. Բ. | | Ղուկասյան Ա. Ա. | |
| | | | | | | | ձայների թիվը | տոկոսը | ձայների թիվը | տոկոսը | ձայների թիվը | տոկոսը |
| Բ. Ստեփանակերտ | 28584 | 24221 | 84,74 | 681 | 539 | 22991 | 2377 | 10,34 | 1772 | 7,71 | 18842 | 81,95 |
| Ասկերանի շրջան | 11094 | 10501 | 94,65 | 111 | 312 | 10078 | 582 | 5,77 | 673 | 6,68 | 8823 | 87,55 |
| Հադրութի շրջան | 8160 | 7451 | 91,31 | 47 | 107 | 7297 | 296 | 4,06 | 254 | 3,48 | 6747 | 92,46 |
| Մարտակերտի շրջան | 18042 | 11545 | 63,99 | 15 | 55 | 11474 | 185 | 1,61 | 125 | 1,09 | 11164 | 97,30 |
| Մարտունու շրջան | 15633 | 14285 | 91,38 | 171 | 247 | 13859 | 359 | 2,50 | 838 | 6,05 | 12662 | 91,36 |
| Շուշիի շրջան | 2383 | 2071 | 86,91 | 58 | 17 | 1996 | 44 | 2,20 | 146 | 7,32 | 1806 | 90,48 |
| Շահումյանի շրջան | 2861 | 2833 | 99,02 | 27 | 4 | 2802 | 61 | 2,18 | 62 | 2,21 | 2679 | 95,61 |
| Քաշաթաղի շրջան | 3380 | 3350 | 99,11 | 13 | 12 | 3325 | 32 | 0,90 | 83 | 2,50 | 3210 | 96,54 |
| Ընդամենը ԼՂՀ-ում | 90137 | 76257 | 84,60 | 1123 | 1293 | 73822 | 3936 | 5,33 | 3953 | 5,35 | 65933 | 89,32 |

*ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ* *Ս. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ*



ջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների հաշվետվությունները հրապարակվել են «ԼՂ Հանրապետություն» թերթում: Ընտրողների ցուցակում ընդգրկվել էր ընտրական ձայնի իրավունք ունեցող 90.137 մարդ:

Գրանցվել էին ԼՂՀ նախագահի երեք թեկնածուներ, որոնց համար հավասար պայմաններ էին ստեղծվել ընտրարշավի ընթացքում:

Քվեաթերթիկներում հանրապետության նախագահի յուրաքանչյուր թեկնածուի մասին տվյալների դիմաց նշված էին «համաձայն եմ» բառերը: Մեկ թեկնածուի օգտին ձայնը տալու դեպքում քվեաթերթիկներում ջնջվել են մյուս թեկնածուների տվյալների դիմաց նշված «համաձայն եմ» բառերը: Քվեաթերթիկները մինչեւ օգտագործելը նախօրոք կնքված էին տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով:

Դրանք տրվել են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում ստորագրությամբ:

Նախագահի թեկնածուների վստահված անձինք, քաղաքացիական նախաձեռնության կարգով ստեղծված շտաբների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները հնարավորություն ունեին հետեւելու քվեարկության ընթացքին, թեկնածուների վստահված անձանց ներկայությամբ՝ ընտրական տեղամասերում ձայների հաշվմանը:

Քվեարկության, քվեաթերթիկների տրման, դրանց ձեւակերպման, ձայների հաշվման ընթացակարգում դիտորդները խախտումների փաստեր չեն հայտնաբերել:

Ընտրությանը մասնակցել է 76.245 մարդ, որը կազմում է գրանցված ընտրողների թվի 84,4 տոկոսը:

Քվեարկության նախնական արդյունքները կազմել են՝

Առուշանյան Բ. Ս.
Կողմ 3.936 «5,3» տոկոս

Ծովմասյան Ա. Բ. 3.953 «5,3» տոկոս

Ղուկասյան Ա. Ա. 65.933 «89,4» տոկոս

Բոլոր թեկնածուների օգտին տրված ձայների քանակը՝ 73822:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ է ընտրվել ԱՐԿԱԴԻ ԱՐՇԱՎԻՐԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ:

## ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունը անց է կացվել համրաճանաչ ժողովրդավարական նորմերին համապատասխան, հրապարակայնորեն, ազատ և արդար, ընտրողների բարձր ակտիվության պայմաններում:

| | |
|---|---|
| Ստուպիշին Վլադիմիր Պետրովիչ | ՀՀ-ում ՌԴ նախկին դեսպան, պաշտոնաթող արտակարգ և լիազոր դեսպան |
| Սենդերով Վալերի Անատոլևիչ | մարդու իրավունքների գծով միջազգային կազմակերպության ներկայացուցիչ |
| Կալինկին Նիկոլայ Իվանովիչ | իրավապաշտպան |
| Գրիգորյանց Սերգեյ Իվանովիչ | «Գլասնոստ» իրավապաշտպան կազմակերպության և հիմնադրամի նախագահ |
| Բոգոսլովսկի Յուրի Ալեքսանդրովիչ | «Գլասնոստ» իրավապաշտպան կազմակերպության անդամ |
| Վակուլենկո Միխայիլ Յուրևիչ | ՌԴ Պետդումայի պատգամավոր, ԱՊՀ գործերով կոմիտեի փոխնախագահ |
| Կուդրյավցև Վիկտոր Վիկտորովիչ | ՌԴ Պետդումայի ԱՊՀ գործերով կոմիտեի Անդրկովկասի գլխավոր փորձագետ |
| Կոժոկին Եվգենի Միխայլովիչ | ՌԴ ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն |
| Բուրդժալով Սերգեյ Պուրբուևիչ | Պետդումայի պատգամավոր |
| Տետեկին Վյաչեսլավ Նիկոլաևիչ | «Ժողովրդաիշխանություն» ֆրակցիայի գլխ. խորհրդական |
| Ռենե Ռուքե | սենատոր, Ազգային ժողովի պատգամավոր, Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետ |



| | |
|---|---|
| Ռոլան Բլում | Ազգային ժողովի պատգամավոր, Մարսելի դեմոկրատական ֆրանսիական միությունից, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի քարտուղար |
| Իվոն դե Շան | Լիոն քաղաքի քաղաքապետի տեղակալ |
| Վարուժան Գրիգորյան | Վիլերբան քաղաքի քաղաքապետի տեղակալ, Լիոնի մեծ խորհրդի անդամ |
| Ռոլանդ Տրուայե | Շվեցարական կոնֆեդերացիայի կանտոնի խորհրդարանի իրավաբանական խորհրդական |
| Դանիելյան Անուշավան | Ղրիմի ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ |
| Դեմենտևա Ելենա | Ղրիմի ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի աշխատակազմի գլխավոր մասնագետ |
| Նույկին Անդրեյ | իրավապաշտպան |
| Նույկինա Գալինա | իրավապաշտպան |
| Դավիթ Շահնազարյան | ՀՀ ԱԺ պատգամավոր |
| Սամվել Շահինյան | Ազգային պետություն կուսակցություն |
| Արամ Մկրտչյան | ՀՀ ԱԺ |
| Սեւակ Առաքելյան | ՀՀ ԿԸՀ |
| Ռուբեն Սանուկյան | ՀՀ ԿԸՀ նախագահի տեղակալ |
| Յուրի Բախշյան | Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի անդամ, ԱԺ պատգամավոր |

| | |
|---|---|
| Արամ Մանուկյան | ՀՀ ԱԺ հանձնաժողովի նախագահ |
| Նորայր Խանզադյան | «Ինքնորոշում» միավորում |
| Ֆիլարետ Բերիկյան | ԱԺՄ |
| Սամսոն Ադամսյան | «Ազատություն» կուսակցություն |
| Վանյա Մխիթարյան | ՀԿԿ, ՀՀ ԿԸՀ |
| Գագիկ Մկրտչյան | ՀՅԴ |
| Արամ Սարգսյան | ՀԴԿ |
| Արմեն Բաղդասարյան | ռամկավար ազատական կուսակցություն |
| Ժորժ Կարապետյան | Ինչակյան կուսակցություն |
| Անդրանիկ Հովակիմյան | ՀՀԾ կարչության փոխնախագահ |
| Սարգիս Ասատրյան | «Երիտասարդական» կուսակցության նախագահ |
| Հրանտ Խաչատրյան | «Սահմանադրական իրավունք» միության նախագահ |
| Կարեն Օհանջանյան | Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի միջազգային ղարաբաղյան հարցով խորհրդի անդամ, իրավապաշտպան |
| Աշոտ Մելիք-Շահնազարյան | ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| Կակոլկին Գրիգորի | «Օտկրըտայա պոլիտիկա» հանդեսի խմբագրի տեղակալ |



# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1988 թվականը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների տարի էր: Հանրապետության կառավարության որոշմամբ սեպտեմբերի 27-ին, հոկտեմբերի 11-ին, նոյեմբերի 22-ին եւ դեկտեմբերի 20-ին առաջին անգամ մեր հանրապետությունում անց են կացվել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Տեղական ինքնակառավարման կառույցները նոր երեւույթ էին մեր հանրապետության կյանքում եւ կարեւոր քայլ՝ դեպի իսկական ժողովրդավարությունը: Այդ նոր համակարգի եւ խորհրդային ժամանակաշրջանի տեղական իշխանությունների միջեւ համեմատության եզրեր չկան:

Ի տարբերություն նախկին գյուղական խորհուրդների, համայնքներն իրենք են տնօրինում սեփականությունը, իրենք են լուծում ներհամայնքային նշանակության հարցերը: Փաստորեն պետական մարմինների իրավասությունները փոխանցվել են տեղական ինքնակառավարման մարմիններին, եւ վերջիններս իրենք են որոշելու՝ ինչպես ծախսել համայնքի բյուջեն, ինչպես տնօրինել սեփականությունը, ներհամայնքային ինչպիսի խնդիրներ լուծել եւ ինչպես:

Ընդլայնված նիստում ամփոփելով սեպտեմբերի 27-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերջնական արդյունքները, որին ներկա էին հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը, Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանը եւ վարչապետ Ժիրայր Պողոսյանը, ԿԸՀ նախագահը նշել է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ի տարբերություն խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների, բավականին ծավալուն էին, բարդ ու դժվարին: Միայն այն հանգամանքը, որ ընտրություններում պետք է ընտրվեին 199 համայնքների ղեկավարներ եւ մոտ 1400 ավագանու անդամներ, վկայում է այդ մասին:

ԿԸՀ շրջանային (քաղաքային) վարչակազմերի հետ միասին,

համաձայն նախօրոք կազմված օրացուցային պլանի, ձեռնամուխ են եղել 8 շրջանային (քաղաքային) եւ 223 տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորմանը: Շրջանային (քաղաքային) ընտրական հանձնաժողովների նախագահներ են ընտրվել՝ Ստեփանակերտ քաղաքում՝ Կ. Մարգարյանը, Ասկերանի շրջանում՝ Ա. Ավանեսյանը, Մարտունու շրջանում՝ Ս. Սեյրանյանը, Մարտակերտի շրջանում՝ Ա. Վերդյանը, Հադրութի շրջանում՝ Է. Դավթյանը, Շուշիի շրջանում՝ Ս. Գաբրիելյանը, Շահումյանի շրջանում՝ Խ. Սահակյանը եւ Քաշաթաղի շրջանում՝ Բ. Եսայանը:

Անշուշտ, կարեւոր հանգամանք է համայնքի ղեկավարի (քաղաքապետի, գյուղապետի), ավագանու ընտրությունը: Բնակչության կողմից անմիջապես համայնքի ղեկավարի ընտրելը երկուստեք պատասխանատվության դաշտ է ստեղծում ընտրողների վստահությունն արդարացնելու առումով, այսինքն աշխատել է «ժողովրդի հետ, ժողովրդի համար» նշանաբանով:

Ընտրություններն անց են կացվել «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքին համաձայն:

Ի տարբերություն խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների, թեկնածուների առաջադրումը կատարվել է ինքնաառաջադրման կարգով, գրավ մուծելու միջոցով:

Հանրապետությունում ինքնաառաջադրվել են համայնքի ղեկավարի 414 թեկնածուներ, ավագանու անդամի 1350 թեկնածուներ, որոնցից Ստեփանակերտի քաղաքային եւ շրջանային ընտրական հանձնաժողովների կողմից գրանցվել են համայնքի ղեկավարի 391 թեկնածուներ, ավագանու անդամի 1280 թեկնածուներ:

Մարտակերտի շրջանի 2, Հադրութի շրջանի 1 եւ Քաշաթաղի շրջանի 14 համայնքներում թեկնածուների առաջադրման հայտ չներկայացնելու պատճառով ընտրությունները չեն անցկացվել:

Ընտրություններից հինգ օր առաջ ինքնաբացարկ են հայտարարել համայնքի ղեկավարի 23 թեկնածուներ, ավագանու անդամի 10 թեկնածուներ, այդ թվում Ստեփանակերտ քաղաքի համայնքի ղեկավարի թեկնածու Էդուարդ Բարսեղյանը:

Քվեարկությունները սկսվել են սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 7-ից եւ ավարտվել են երեկոյան ժամը 20-ին:

Քվեարկության օրը եւ ընտրությունների արդյունքները ամ-



փոփելու ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, վերադաս մարմիններ գրավոր կամ բանավոր բողոքներ եւ գանգատներ չեն մտել:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի 23 հոդվածի, Ստեփանակերտ քաղաքի համայնքի ղեկավարի թեկնածուների օգտին տրված ձայները բաշխվել են՝

Կարեն Անդրանիկի Բաբայանի օգտին 11667 հոգի կամ 87,3 տոկոս

Գեորգի Միքայելի Պետրոսյանի օգտին 1697 հոգի կամ 12,7 տոկոս



Կարեն Անդրանիկի ԲԱԲԱՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետ



*Այսպիսով՝ Ստեփանակերտ քաղաքի համայնքի ղեկավար է ընտրվել Կարեն Անդրանիկի Բաբայանը:*

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, ընդլայնված նիստում շնորհավորելով Կարեն Բաբայանին Ստեփանակերտ քաղաքի համայնքի ղեկավար ընտրվելու կապակցությամբ, նրան է հանձնել ընտրվելու մասին վկայական:

Հանրապետությունում համայնքի ղեկավար են ընտրվել 153 հոգի, որից՝

| | | |
|---|---|---|
| Ասկերանի շրջանի | 34 | համայնքներում |
| Մարտունու շրջանի | 24 | — » — |
| Մարտակերտի շրջանի | 32 | — » — |
| Հադրութի շրջանի | 19 | — » — |
| Շուշիի շրջանի | 6 | — » — |
| Շահումյանի շրջանի | 2 | — » — |
| Քաշաթաղի շրջանի | 36 | — » — |

Հանրապետության 23 համայնքներում համայնքի ղեկավարի քվեարկության երկրորդ փուլ է կայացել հոկտեմբերի 11-ին՝ առավելագույն ձայներ ստացած 2 թեկնածուների մասնակցությամբ, որից՝

| | |
|---|---|
| Ասկերանի շրջանի | 4 համայնքներում |
| Մարտունու շրջանի | 8 — » — |
| Մարտակերտի շրջանի | 2 — » — |
| Հադրութի շրջանի | 5 — » — |
| Շուշիի շրջանի | 1 — » — |
| Շահումյանի շրջանի | 1 — » — |
| Քաշաթաղի շրջանի | 2 — » — |

Ընտրությունները համարվել են չկայացած եւ նոր ընտրություններ են անցկացվել՝

Մարտունու շրջանի մեկ համայնքում,
Մարտակերտի շրջանի երեք համայնքներում,
Քաշաթաղի շրջանի մեկ համայնքում:

Ավագանու անդամներ են ընտրվել 1.195 հոգի, որից՝

| | | |
|---|---|---|
| Ստեփանակերտ քաղաքի | 5 տարածքներում | 15 հոգի |
| Ասկերանի շրջանի | 38 համայնքներում | 263 հոգի |
| Մարտունու շրջանի | 33 — » — | 219 |
| Մարտակերտի շրջանի | 37 — » — | 262 |
| Հադրութի շրջանի | 23 — » — | 147 |



| | | |
|---|---|---|
| Շուշիի շրջանի | 7 — » — | 51 |
| Շահումյանի շրջանի | 3 — » — | 21 |
| Քաշաթաղի շրջանի | 31 — » — | 217 |

Ավագանու վերաքվեարկություն է կատարվել Հադրութի շրջանի մեկ համայնքում:

Ընտրությունների արդյունքների ամփոփումից եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախնական արդյունքների հրապարակումից հետո գրավոր բողոքներ են մտել Հադրութի շրջանի Հադրութ համայնքի ղեկավարի թեկնածու Վահան Բաղդասարյանից, Մարտունու շրջանի Սպիտակաշեն եւ Մարտակերտի շրջանի Վաղուհասի եւ Գառնաքարի համայնքներից ընտրությունների ընթացքում թույլ տրված խախտումների մասին, որոնք մանրամասնորեն ստուգվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կողմից եւ ձեռնարկվել համապատասխան միջոցներ. Մասնավորապես, ընտրական փաստաթղթերի պահպանման կարգի խախտումներ թույլ տալու եւ Հադրութի ընտրական տեղամասում համայնքի ղեկավարի ընտրությունը «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան անցկացնելու գործում պատշաճ վերահսկողություն չսահմանելու համար խիստ զգուշացվել են Հադրութի շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահ Է. Դավթյանը եւ հանձնաժողովի քարտուղար Ա. Աբրահամյանը, անվստահություն է հայտնվել Հադրութի տեղամասային ընտրական հանձնաժողովին եւ առաջարկվել շրջանային ընտրական հանձնաժողովին եւ շրջանի վարչակազմին եռօրյա ժամկետում «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ եւ «Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածների պահանջով կազմավորել Հադրութի տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Համայնքի ղեկավարի ընտրությունները Մարտակերտի շրջանի Վաղուհասի եւ Գառնաքարի համայնքներում ճանաչվել են անվավեր եւ հոկտեմբերի 11-ին անց է կացվել վերաքվեարկություն թեկնածուների նույն կազմով:

Ընտրությունների ընթացքին դիտորդային առաքելությամբ հետեւում էին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եր-

կու անդամներ՝ Երեւանի մարզային համայնքի եւ Էրեբունու համայնքի անդամները՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Զոհրաբյանի ղեկավարությամբ, որոնք եղել են Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու շրջանային եւ մի քանի տեղամասային ընտրական հանձնաժողովներում, հանդիպումներ են ունեցել ընտրողների, հանձնաժողովների անդամների եւ վստահված անձանց հետ:

Հանդիպումների ընթացքում չի գրանցվել որեւէ բողոք կամ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ օրենքին հակասող որեւէ խախտման դեպք:

Նրանց կողմից արձանագրվել է, որ «Չնայած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները ԼՂՀ-ում անց են կացվում առաջին անգամ, սակայն մեր կողմից չի գրանցվել որեւէ խախտում եւ գտնում ենք, որ ընտրությունները անց են կացվել ժողովրդավարության սկզբունքների շրջանակում, սահուն եւ կազմակերպված»:

Սեպտեմբերի 27-ին կայացած ընտրություններից հետո, հոկտեմբերի 11-ին անց է կացվել վերաքվեարկություն, նոյեմբերի 22-ին եւ դեկտեմբերի 20-ին՝ նոր ընտրություններ՝ չկայացած համայնքներում:

Կայացած բոլոր ընտրություններում հանրապետությունում ընտրվել են 195 համայնքի ղեկավար եւ 1248 ավագանու անդամ:

Համայնքի ղեկավարներ են ընտրվել՝

| | |
|---|---|
| ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔ | Բաբայան Կարեն Անդրանիկի |

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

| | |
|---|---|
| 1. Ասկերան քաղաք | Բալասանյան Վլադիմիր Միքայելի |
| 2. Ակնաղբյուր | Գեւորգյան Ռուբեն Լալայի |
| 3. Այգեստան | Հակոբյան Ալյոշա Գարեգինի |
| 4. Աստղաշեն | Գրիգորյան Սլավա Արշակի |
| 5. Ավետարանոց | Հայրապետյան Յուրի Գրիգորիի |
| 6. Բադարա | Արզումանյան Կարեն Վերդիի |
| 7. Բերքաձոր | Գալստյան Վլադիմիր Սամիկոնի |
| 8. Դահրավ | Ներսիսյան Ռազմիկ Եռովքի |
| 9. Դաշուշեն | Սարգսյան Միշա Արամի |



| | |
|---|---|
| 10. Լեռնավան | Նիկողոսյան Մհեր Մերուժանի |
| 11. Լուսաձոր | Զաքարյան Էլանորա Աղասիի |
| 12.Խանաբադ | Մանգասարյան Գուրգեն Ամիրջանի |
| 13. Խանցք | Հարությունյան Զորիկ Լավրենտի |
| 14. Խաչեն | Գրիգորյան Վաչագան Խաչատուրի |
| 15. Խաչմաչ | Գրիգորյան Ռաֆայել Պավելի |
| 16. Խնձրիստան | Բեգլարյան Արամ Շաքրոյի |
| 17. Խրամորթ | Ղահրամանյան Բորիս Ղահրամանի |
| 18. Ծաղկաշատ | Սեհրաբյան Յուրի Էռնեստի |
| 19. Կարմիր գյուղ | Ավետիսյան Ալեքսանդր Ալբերտի |
| 20. Հարավ | Գասպարյան Համլետ Յուրիկի |
| 21. Հիլիս | Ղուլյան Յուրիկ Սուրենի |
| 22. Մաղաքաշեն | Դանիելյան Միշա Ռուբենի |
| 23. Մխիթարաշեն | Առուստամյան Մխիթար Միքայելի |
| 24. Մոշխմհատ | Սաֆարյան Սամվել Իշխանի |
| 25 Նախիջեւանիկ | Բաբայան Միքայել Երվանդի |
| 26. Նորագյուղ | Գալստյան Արմավիր Ալեքսանի |
| 27 Ներքին Սզնեք | Մարգարյան Շահեն Սարգսի |
| 28. Ոռչ | Աբրահամյան Կարեն Անդրանիկի |
| 29 Ջրաղացներ | Բալոյան Վոլոդյա Արսենի |
| 30. Ռեւ | Արզումանյան Արմեն Սամվելի |
| 31. Սառնաղբյուր | Առստամյան Յուրի Իվանի |
| 32. Սարդարաշեն | Բարսեղյան Սամվել Սերգեյի |
| 33. Սարուշեն | Հարությունյան Արտյուշա Միքայելի |
| 34. Սղնախ | Մխիթարյան Արմեն Արտաշեսի |
| 35. Վարդաձոր | Սառաջյան Սամվել Ռաֆիկի |
| 36. Վերին Սզնեք | Մարգարյան Ալբերտ Վանյայի |
| 37. Փառուխ | Հարությունյան Հենրիխ Գրիգորիի |
| 38. Քռասնի | Ավանեսյան Ժորա Մանվելի |

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

| | |
|---|---|
| 1. Մարտունի քաղաք | Ավանեսյան Արտյոմ Ռաֆիկի |
| 2. Աշան | Խաչատրյան Նորայր Գեւորգի |
| 3. Ավդուռ | Ամիրխանյան Ալյոշա Աշոտի |
| 4 Բերդաշեն | Ասրյան Զարմիկ Մուրադի |
| 5. Գիշի | Բաղրյան Հենրիկ Վարդանի |
| 6. Հաղորտի | Ավանեսյան Էդիկ Սարգսի |

| | |
|---|---|
| 7. Մաճկալաշեն | Հարությունյան Սուրեն Աբելի |
| 8. Ննգի | Հայրապետյան Ժորա Լեւոնի |
| 9. Սպիտակաշեն | Հայրապետյան Սյուզա Անդրանիկի |
| 10. Եմիշճան | Հայրապետյան Արայիկ Շահենի |
| 11. Ջարդանաշեն | Ներսիսյան Սիմոն Հայկի |
| 12. Թաղավարդ | Հարությունյան Օլեգ Եղիշեի |
| 13. Խերխան | Փարամազյան Գեորգի Հայկի |
| 14. Խնուշինակ | Թեւոսյան Համլետ Ապետնակի |
| 15. Ծովատեղ | Սովսիսյան Միրա Բաղրամի |
| 16. Կաղարծի | Սարգսյան Գարուշ Սերգեյի |
| 17. Կարմիր շուկա | Ազիզյան Լյուդմիլա Վիլյամի |
| 18. Կոլխոզաշեն | Հարությունյան Մարտին Գրիշայի |
| 19. Հացի | Գասպարյան Արա Գասպարի |
| 20. Հերհեր | Ստեփանյան Սերգեյ Շաբոյի |
| 21. Ղավախան | Ստեփանյան Բենիկ Ռուբենի |
| 22. Ղուզե Ճարտար | Ալիբաբայան Գենադի Արտավազդի |
| 23. Ճարտար | Հովհաննիսյան Վլադիկ Նիկոլայի |
| 24. Մյուրիշեն | Սեժլումյան Բորիկ Պավելի |
| 25. Մսմնա | Բաբայան Համլետ Սողոմոնի |
| 26. Մուշկապատ | Սաղյան Վարուժան Արմենի |
| 27. Նոր շեն | Յատրյան Էդուարդ Սարգսի |
| 28. Շեխեր | Ավագյան Մանվել Արմենի |
| 29. Պառավաթումբ | Գեւորգյան Սերժիկ Անդրանիկի |
| 30. Սարգսաշեն | Ասլանյան Կառլեն Ենոքի |
| 31 Սոս | Գաբրիելյան Յուրիկ Արսենի |
| 32. Քարահունջ | Ղահրամանյան Գառնիկ Ալյոշայի |
| 33 Քերթ | Գեւորգյան Գառնիկ Ալիշի |

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

| | |
|---|---|
| 1. Մարտակերտ քաղաք | Բաղրյան Իլիչ Արամայիսի |
| 2. Աղաբեկալանջ | Գաբրիելյան Մարիետա Սերգեյի |
| 3. Ջարդախաչ | Միրզոյան Արայիկ Արկադիայի |
| 4. Այգեստան | Միրզոյան Արտիկ Արմենակի |
| 5. Առաջաձոր | Զաքարյան Արմեն Բախշիի |
| 6. Թբլղու | Հարությունյան Սանասար Բաղդասարի |
| 7. Գետավան | Շիրինյան Դավիթ Հրաչիկի |
| 8 Դրմբոն | Շաբոյան Սուրեն Լազրի |



| | |
|---|---|
| 9. Ձագլիկ | Կիրակոսյան Ժանիկ Զավենի |
| 10. Թալիշ | Պետրոսյան Վիլեն Բարաթի |
| 11. Ծաղկաշեն | Խաչատրյան Լավրենտ Մակարի |
| 12. Կիչան | Սարգսյան Գարիկ Արմենակի |
| 13. Կոճողոտ | Սարգսյան Վելիկո Նիկոլայի |
| 14. Կուսապատ | Նալբանդյան Բորիկ Վաղարշակի |
| 15. Հակոբ Կամարի | Միրզոյան Բորիս Արմենակի |
| 16. Հարությունագոմեր | Սարգսյան Հրաչիկ Հարությունի |
| 17. Հաթերք | Խաչատրյան Ժորա Անդրանիկի |
| 18. Հովտաշեն | Մանուկյան Պավել Ռազմիկի |
| 19. Սադաղիս | Ավանեսյան Սյոմա Բագրատի |
| 20 Մաղավուզ | Սարգսյան Ռազմիկ Հակոբի |
| 21. Մեծ շեն | Խուրշուդյան Սլավիկ Արսենի |
| 22. Մեհմանա | Աթաբեկյան Լեւոն Գարեգինի |
| 23. Մոխրաթաղ | Ղահրամանյան Ջեմս Շամիրի |
| 24. Ներքին Հոռաթաղ | Պետրոսյան Ռաֆիկ Վլադիմիրի |
| 25. Նոր Մարաղա | Համբարձումյան Վագիֆ Յաշայի |
| 26. Չլդրան | Արզումանյան Սերգեյ Երմոնի |
| 27. Պողոսագոմեր | Բեղյան Վիտալիկ Մանվելի |
| 28. Ջանյաթաղ | Մարտիրոսյան Վովա Գուրգենի |
| 29. Վաղուհաս | Զաքարյան Աշոտ Սերգեյի |
| 30. Վանք | Օհանյան Ֆեդյա Իսայի |
| 31. Վարդաձոր | Դանիելյան Նելսոն Էդուարդի |
| 32. Ծմակահող | Հայրապետյան Ստելլա Սուրենի |
| 33. Վերին Հոռաթաղ | Մարտիրոսյան Գրիշա Ռուբենի |
| 34. Քոլատակ | Աղասյան Միհրան Ռաշիդի |
| 35. Գառնաքար | Մելքումյան Կնյազ Ներսեսի |
| 36. Ղազանչի | Առստամյան Թեմուր Վերդիի |
| 37. Նոր Սեյսուլան | Ստեփանյան Լյուդվիգ Լեւոնի |
| 38. Ճահմասուր | Բաղդասարյան Հրանտ Ռադիկի |
| 39. Չափար | Գրիգորյան Սերժիկ Ռաֆիկի |

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

| | |
|---|---|
| 1. Հադրութ քաղաք | Ավանեսյան Իվան Խորենի |
| 2. Առաքել | Ղահրամանյան Էրիկ Միքայելի |
| 3. Ծամձոր | Մնացականյան Ավետիք Բորիսի |
| 4. Մոխրենես | Ստեփանյան Յուրա Մանվելի |

5. Տումի
6. Ազոխ
7. Ակնաղբյուր
8. Այգեստան
9. Արևշատ
10. Բանաձոր
11. Դրախտիկ
12. Թաղասեռ
13. Թաղոտ
14. Խանձաձոր
15. Ծակուռի
16. Կարմրակուճ
17. Հին Թաղլար
18. Մեծ Թաղլար
19. Պլեթանց
20. Ջրակուս
21. Տող
22. Ուխտաձոր
23. Քյուրաթաղ
24. Խծաբերդ

## ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ

1. Շուշի քաղաք
2. Եղծահող
3. Լիսագոր
4. Հին շեն
5. Մեծ շեն
6. Քարին տակ
7. Քիրսավան

## ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ

1. Ակնաբերդ
2. Դադիվանք
3. Չարեքտար

Բաղյան Հաշիմ Լեւոնի
Պետրոսյան Վալերի Գրիգորիի
Բաբաջանյան Արթուր Ալեքսանդրի
Հովհաննիսյան Դավիթ Էդուարդի
Հայրապետյան Արթուր Միքայելի
Ավանեսյան Ռուբեն Խորենի
Մեսրոպյան Ստեփան Սուրենի
Բուդաղյան Էդիկ Գրիգորիի
Ավետիսյան Սուրեն Ապրեսի
Բաղասյան Գրիշա Միքայելի
Խաչատրյան Արմեն Յուրիկի
Ղավթյան Ալիկ Արմիկի
Ճաղյան Իլիչ Ռուբենի
Դանիելյան Վլադիկ Վաչագանի
Մարտիրոսյան Վոլոդյա Պավելի
Նազարյան Գենադի Ավետիսի
Շաբուրյան Ալեքսանդր Դարվինի
Օհանյան Արմեն Հրանտի
Նավասարդյան Ռիտա Արմենակի
Քարամյան Վրեժ Գրիգորիի

Մանգասարյան Սամվել Տիգրանի
Նասիբյան Ռոմա Ջալալի
Նասիբյան Յաշա Ջալալի
Սարգսյան Գրիշա Աղաբեկի
Ղավթյան Արայիկ Սուրենի
Հովհաննիսյան Գրիշա Համբարձումի
Հայրիյան Սամվել Շահենի

Քոխյան Մարտին Սերյոժայի
Եսայան Սարգիս Մաքսիմի
Հովհաննիսյան Սաքանազ Արմենակի



## ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ

1. Բերձոր քաղաք
2. Միջնավան
3. Ամուտեղ
4. Այգեհովիտ
5 Արտաշեն
6. Արվական
7. Գանձա
8. Գետափ
9. Գողթանիկ
10. Երիցվանք
11. Ծաղկաբերդ
12. Կովսական
13. Կումայրի
14. Հերիկ
15. Հոչանց
16. Մարաթուկ
17. Մարգիս
18. Մարտունաշեն
19. Աշենի
20 Մոշաթաղ
21. Ղոշավանք
22 Սարատակ
23. Սուս
24 Վազգենաշեն
25. Վակունիս
26 Վարդաբաց
27 Վուրգավան
28.Տիգրանավան
29. Փակահան
30. Քաշաթաղ
31. Քաշունիք
32 Քարագլուխ
33. Քարեգահ
34. Ուռեկան
35. Սիրիկ
36. Աղանուս

Բաղդասարյան Ռաֆայել Լուկաշի
Ստեփանյան Վիրաբ Մարտիրոսի
Նավասարդյան Սաշա Մկրտչի
Սարգսյան Դավիթ Հրաչի
Երզումանյան Վազգեն Աղվանի
Հովհաննիսյան Հաննիբալ Արշալույսի
Ջամանյան Խաչիկ Վաչագանի
Ավետիսյան Գեղամ Սերոժայի
Դանիելյան Անահիտ Մկրտչի
Հարոյան Անուշավան Աղասիի
Եղոյան Ազատ Մնացականի
Ադամյան Խաչատուր Գրիգորիի
Վիրաբյան Սպարտակ Վոլոդյայի
Պետրոսյան Ռոբերտ Ժորայի
Հարությունյան Գագիկ Էռնեստի
Չոբանյան Գառնիկ Շահենի
Մարգարյան Ֆրունզե Հայելի
Մանուկյան Լադուշ Վաղարշակի
Սարգսյան Յուրիկ Հրաչի
Աբգարյան Արա Մինասի
Սարգսյան Արտյոմ Հենրիկի
Կարապետյան Վաղուշ Կարապետի
Բաղալյան Ալբերտ Սուրենի
Գյուլզադյան Սամվել Խորենի
Եսայան Խաչատուր Ալեքսանի
Ղարիբյան Գրիգոր Լեւոնի
Կարապետյան Վոլոդյա Արամայիսի
Ավագյան Հովհաննես Ռոբիկի
Շահբազյան Մարտիրոս Մարոսի
Սերոբյան Վարդգես Խաչատուրի
Սարիբեկյան Սողոմոն Վարազդատի
Հայրապետյան Հարություն Սմբատի
Սիրեկանյան Ստոմ Արտուշի
Գալստյան Մուշեղ Խաչիկի
Քարամյան Շավասպ Նիկոլայի
Ղուկասյան Կառլեն Թելմանի

| | | |
|---|---|---|
| 37. | Աղավնո | Միքայելյան Հարություն Սպարտակի |
| 38. | Բյուլուլ Վանք | Պապեյան Անդրանիկ Պապենի |
| 39. | Մելիքաշեն | Հովսեփյան Ռուբեն Մովսեսի |
| 40. | Դրախտիկ | Սարգսյան Սամվել Հովհաննեսի |
| 41. | Ծիծեռնավանք | Հարությունյան Հայկ Ռուբիկի |
| 42. | Հայկազյան | Համբարյան Մխիթար Վաշինգտոնի |
| 43. | Հայթաղ | Մարգարյան Արմեն Հենրիկի |
| 44. | Ձուար | Կյուրեղյան Տիգրան Սպարտակի |
| 45. | Ղազարապատ | Զաքարյան Արծրուն Սուրենի |
| 46. | Վաղազին | Մոսիյան Գագիկ Աշոտի |
| 47. | Մովսեսաշեն | Գորգիսյան Սամվել Գեւորգի |
| 48. | Նորաշենիկ | Արամյան Լեւոն Աշոտի |
| 49. | Մոնասար | Հարությունյան Լեւոն Շավարշի |

***

Հայկական նոր պետականության՝ ԼՂՀ հռչակումից հետո, ինչպես ասում են՝ շատ ջրեր են հոսել: Տեղի են ունեցել քաղաքական, ռազմական [illegible]յալ-տնտեսական կտրուկ շրջադարձեր, որոնք փոխել են հարաբերակցությունը հակամարտ ուժերի մի կողմից Արցախի հայ ժողովրդի՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ մյուս կողմից Ադրբեջանի միջեւ: Ռազմաճակատում ձեռք բերած մեր գերակշռությունը հարկադրեց Ադրբեջանին ժամանակավոր հրադադարի պայմանավորվածություն ձեռք բերել պատերազմող կողմերի միջեւ: Ղարաբաղի նորանկախ պետության համար որոշակի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, որպեսզի մեր ժողովուրդը ձեռնամուխ լինի սոցիալ-տնտեսական, քաղաքական վերափոխումների իրականացմանը:

Չնայած Ադրբեջանը ամեն կերպ ձգտում է անտեսել ԼՂՀ-ին որպես պետական նոր ձեւավորում, Արցախի հայ ժողովուրդը համառորեն, գուցեեւ դանդաղ քայլերով, բայց հետեւողականորեն իրականացնում է, այլ միջոցառումների հետ միասին, պետական իշխանությունների հեռագնա ծրագիր:

Ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման ուղղությամբ 1991-1998 թվականներին ԼՂՀ-ում իրականացված տարբեր մակարդակի



ընտրությունները պերճախոս վկան են այն բանի, որ ԼՂՀ-ն կայանում է, ստեղծում է իր պառլամենտը, տեղական իշխանությունների ինստիտուտները, համաժողովրդական ընտրությունների [illegible]գով ունի իր երկրի ղեկավարը:

Այդ գործընթացում իր բաժին ներդրումն ունեն նրանք, ովքեր մասնակցել են ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը: Մենք գոհունակությամբ կարող ենք նշել, որ միջազգային դիտորդները հաստատել են այն փաստը, որ մեզ մոտ ընտրություններն անցնում են ազատ, թափանցիկ, առանց բռնությունների, միջազգային պահանջներին համապատասխան:

Հուսով ենք, որ ընթերցողին առաջարկվող սույն գրքույկը իր մասնակցությունը կբերի քարոզչական այն պայքարին, որի նպատակն է միջազգային հանրությանը ապացուցել, որ Արցախի հինավուրց հողում իր անկախությունը, նոր պետականություն ձեռք բերած մի բուռ ժողովուրդ շարունակում է իր տնտեսությունը բարենորոգելու, ժողովրդի սոցիալական վիճակը բարելավելու, իր սահմանները ամրապնդելու եւ պետականությունը կառուցելու գործընթացը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

Անկախության հանրաքվե 4

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների ընտրությունները 12

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները 16

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրությունը 21

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունը 37

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները 49

Մուշեղ Գրիգորի Օհանջանյան

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

## ԼՂՀ-ում ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-1998)

Ստեփանակերտ - 1998
«Սոնա» գրահրատարակչություն

Խմբագիր՝ Մ. Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Ժ. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Սրբագրիչ՝ Ծ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հանձնված է շարվածքի 05.11.1998 թ.: Ստորագրված է տպագրության 11.12.1998 թ.: Թուղթ 42x60 1/16: Տպագրական 4 մամուլ: Տպագրությունը օֆսեթ: Գինը պայմանագրային: «ՄՈՆԱ» գրահրատարակչություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 4: